

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ ՌՀՀ — ՇՐՋԱՆ ԺԸ. 1885 ՏԱՐԻ ԺԷ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ԳԵՐԱԳՈՑՆ ԲԱՐԻՆ։

Ա–Էփես. Մ՚ա՚. 13. 14։

Մի ոսկու գանձ խոր թաղուած էր մի ագարակի մէջ ու մի մարդ նորա տեղը գտաւ։ Նա, այդ գանձը գտնելու համար, առաւօտուանից՝ պեռ լոյսը բացուած չբացուած՝ մինչև իրիկունը՝ մութը գետինն առնելն՝ աշխատումէր, և ոչ մի աշխատութիւն ու չարչարանք նորա աչքը չվախացրեց։ Այն ժամանակն ասաց գանձի պահապան ոգին, «վախուած կմնայ քո առաջդ գանձի դուռն, մինչև որ դու ունայն աշխարհիս ու կեանքիս բարիքը չծախես ու փրկանք չբերես այդ գանձը ստանալու համար»։

Ա՛յն գանձն, որոյ համար Տէրն ասել է, ուրիշ ոսկեհուռն ու ականակապ զարդի նման չէ՞։ Այդ գանձը գտնելու՝ նա մեզ համար ճանապարհ է բաց արել մեհովը։ Այս գանձին՝ Աստուծոյ արքայութիւն են ասում։ Այս գանձը դու երբէք չես գտնել, եթէ որ այդ յաւիտենական գանձը ստանալու համար չզոհես քո բոլոր բարիքդ, որ քեզ կապումես աշխարհիս վիշանալու, հող դառնալու բանի հետ։

Ո՛վ աշխարհ, ի՜նչպէս անկայուն, ի՜նչպէս անցաւոր է ամենայն բան, որ մէջդ հիւրընկալումես։ Ապաւաժ սարն, որ մինչև ամպերն է բարձրացնում, հասցնում իւր գլուխը, կամաց կամաց կորտրտւում է, փշրատւում ու փչանում ձիւնի ծիւերի նման, որ ընկնում են գետնի վերայ ու հալւում։ Հարստութեան գանձերն, որ բաղդն ու աշխատութիւնը միմեանց վերայ դիզում են, օրքան երկար են արդեօք քնում։ Օրիորդի սիրտ գրաւող գեղեցկութիւնից, պատանուոյ աշխոյժն ախորժելի տեսքից յափշտակւում է. բայց, տարիներ անց կենալուց յետոյ, զո՜ւր ես պատում դու այդ մէջդ ոգևորում արդէն փոխուած, ընկած, ծերացած մարդու մէջը։ Թագաւորները պալատներ են շինում որ յաւիտեան մնան։ Բայց յաւիտենական բան կա՞յ արդեօք աշխարհիս երեսին. ամեն կողմից թափուած պատերը սպառնում են քանդում են, ու փլատակներից դուրս է հանում իւր գլուխն անպտուղ բաղեղն՝ ամայութեան և աւերակների ընկերը։ Հին ժամանակուայ մեծ քաղաքների տեղն՝ այժմ տեսնում ենք արդէն հարիւր տարիներով յառաջ, դուրս եկած վայրենի անտառներ։ Ունայնամիտ մարդիկ երազում էին, որ այդ քաղաքներն էլ յաւիտեան մնալու համար են շինուած ու յաւիտեան կմնա՜ն։ Մի հզօր թագաւորի զօրութիւնը սասանեցնում է աշխարհիս մի մասի բոլոր թագաւորութիւնը, կատր կատր է անում թագեր, բաժան բաժան է անում աղգեր, իւր կամքը նոր բաներ է ստեղծում, ու ինչ որ ինքը կամեցաւ, իսկոյն պատրաստ է։ Ի՜նչպէս մեծ ու նախանձելի մարդ է երևում մեզ այդ կիսաստուածը։ Բայց մէկ էլ տեսնես, իւր մարմնոյ մի փոքրիկ մի բարակ թելը թուլացաւ, մի փոքրիկ արիւներակը կորաւեց, — ու այն անսասանելի մարդը դեղնեց ու ընկաւ դագաղ, ամենին նախանձելի կիսաստուածն արդէն պառկեց հողի տակ ու փտելու վերայ է։ Ամբողջ աղդերի պարսաւանքը՝ շատ անգամ՝ նզովքը՝ անվերջ թափվումեն՝ երբեմն իրանց աստուածացրած՝ մեծ մարդու գերեզմանի վերայ՝ իւր մահուանից յետոյ։

Ուրեմն երկնքի տակն ոչ մի կայուն բան չկայ։ Ամեն, ամեն բան ուրեմն հանգամանքի իշող է և ժամանակների աւերի։ Մարդոց ցնծութեան սրտերն ուրախ ձայներն կամաց կամաց օդումը ցնդումեն վշտի ու տխրութեան մէջ մինակ նստած լացողի տաք արտասուքն էլ վերջանում է։ Գայ այն օրն, որից ոչ ոք

չխախչիլ. այն օրն, որ աղքատի ձեռքից իւր վայրը կխլի, թագաւորի գլխից՝ իւր թագը։

« Եւ եթէ ամենայն բան էլ կորչի անհետանայ, մոռացուի՝ բայց պատմութեան թերթը պղնձի է, որի մէջ մարդու մեծ գործն որ գրուի, նորա անունն անմահ կմնայ աշխարհումս յետոյ ապրող մարդոց մոքի մէջ։ Կենդանի մարդու համար էլ օգևորիչ է յետոյ ունենալու իւր մեծ անուան ու փառքի ձայնն »։ Այսպէս են ասում շատերը։ Բայց մարդուս իրանից յետոյ էլ ունենալու իւր մեծ անունն ու փառքը մի ունայն խաբէութիւն է միայն, որով իւր պատուասիրութիւնը շողոքորթումէ։ Իւր մահից յետոյ մեծ անուն թաղնողն արդէն վաղուց իւր կեանքը վերջացրել է ու էլ չկայ աշխարհումս, իսկ իրանից յետոյ աշխարհումս ապրողն չգիտէ թէ՝ մեծ անուն ստացել է արդեօք, առաւել և ս չգիտէ, թէ ինչ կերպով է ստացել և ինչ տեսակ անուն է ունեցել։ Ինչպէս որ մարդիկը, քիչ է պատահում, որ իրանց լաւ անցկացրած օրերն այնպէս երկար ժամանակ մոքներումը պահեն, ինչպէս որ իրանց քաշած վատ օրերը չեն մոռանում, պատմութիւնն էլ, սովորաբար, ամենից աւելի յիշումէ միայն նորանց, որ իրանց անբաղտութեամբը մեծ մի անուն են հանել։ Մարդկային ապգի բարերարներն, որոց անունն օրհնելով են յիշում իրանցից յետոյ աշխարհումս ապրող մարդիկ, թուով շատ չեն։ Բայց հարիւրաւոր պատուամոլ չարագործների մասին լաւ տեղեկութիւն ունինք։ Բայց դորանք էլ կմոռացուին։ Ժամանակի հոսանքն, որ դորանց ամենքի վրայով անց է կենում՝ գնում՝ բարիներին էլ, չարերին էլ իւր յորձանքից բացած անդունդքի մէջ կթաղի։

Դէ այսպէս ասուերի նման բաներ են կեանքի ամենամեծ բարիքն, որոց եռևից մահկանացու մարդս ընկնումէ՝ առանց աչքը կշռանալու։ Գեղեցկութիւն, հարստութիւն, բարձր դիրքը ու աստիճան, գիտնականութիւն, զօրութիւն ու մեծութիւն՝—բոլորն էլ անց կացող գնացող՝ աչքակապութեան նման բաներ են, երազներ են, ինչպէս որ հէնց մեր կեանքն էլ է։

Եւ եթէ որ, ինչպէս ահա տեսնումինք, հարստութիւնն, որ այսօր կայ, վաղը՝ չկայ, ուրեմն փուշու պէս մի բան է, որ քամին տանումէ. եթէ որ զօրութիւնն, իշխանութիւնը մի ոչինչ բան է, գեղեցկութիւնը թառամումէ, փառքը նուազումէ մի ժամանակից յետոյ այնքան, որ էլ չէ յիշվում թէ՝ մեծ արժանաւորութեան

արձագանքը լինէր մի մեծագործ մարդու, և մեծութիւնն էլ մի դիակ է, մի անշնչացած մարմին, քանի որ այդ մեծութիւնն ունեցողն անշունչ դիակ է դառնում մեռնելով. — եթէ որ այժմ ծաղկած վիճակի մէջ գտնուող թագաւորութիւններն, այժմ ապրող ազգերն աշխարհիս երեսից սրբվումեն ու անհետանում — էլ ինչ է մնում այնտեղ, ուր որ ոչ մի բան չէ մնում. ինչն է կանգուն մնում այնտեղ, ուր որ ամեն բան կործանվումէ։ —

Այս աստղն, որոյ մէջ ես մի կարճ ժամանակ քնակվումեմ ու ապրում ու անունն երկրագունդ եմ ասում՝ դեռ ոչքան ժամանակ պիտի մանգայ արեգակի շուրջը, իւր կեղևը չորանալուց առաջ, իւր մակերևոյթը կիր դառնալուց առաջ, որ կենդանի էակների համար անբնակելի տեղ պիտի դառնայ այնուհետև։ Արդեօք այն արեգակներն ու աստղերն էլ, որ տեսնումեմ երկրնքումն իմ գլխիս վերայ, չպիտի փոփոխութեան տակ ընկնեն։ Այս երկրագունդն, որոյ վերայ մանն եմ գալիս, երկնքի այն լուսաւորներն, որ իմ գլխիս վերայ լոյս են տալիս, ի յաւիտենից չեն առաջ եկել, յաւիտենականութիւն էլ չունեն։

Սարսափելով՝ աչքերս սառած՝ մտիկ եմ տալիս այն գաստարկութեան վերայ, որոյ ծայրը չէ երևումի և որոյ մէջն ոչ մի շարժում, ոչ մի ձայն՝ ծպուտ, ոչ մի շունչ չկայ։ Մի ժամանակ՝ առաջ ծաղկած դրութեան մէջ եղած աշխարհիս, ամեն բանը վեռացած դիակ կդառնայ, մի անսահման ու խաւար պատած ոչինչ կդառնայ, ինչպէս որ էր առաջ, քանի որ Արարիչն այդ ոչինչից դրախտ չէր ստեղծել ու գոյացրել։ Միայն աւերն, եղծումն, ապականութիւն, չքնութիւն է քնակվում այն անծայր, անվերջ տիեզերքի մէջ, որ այժմ իմ ամեն կողմումն տեսնումեմ վայլուն, գեղեցիկ, գոյնզգոյն՝ իւր դրութեանը մէջ։

Բայց իմ հոգիս այս ապականութեան շիւթից, աշխարհիս այս անկարգ, խառն ու անկերպարան դրութիւնից վեր է բարձրանում յաղթանակ կանգնելով։ Նա գիտէ, որ միայն եղծանելին պիտի եղծանի. աշխարհիս ամեն բաները փոփոխութիւնների տակ կընկնեն, բայց աստուածութիւնն անփոփոխ՝ յաւիտեան կմնայ. ուրիշ ամենայն արարածներն որ եղծուին էլ՝ աստուածայինը կմնայ։

Աստուածայինը ծածկած, անտեսանելի մի կենսական զօրութիւն է հէնց իմ մէջս էլ, և աստուածայինն է ԱՍՏՎԱԾ-ՆԿԱՆ,

որով հոգին ազնուանում է։ Առաքինութիւն ու յաւիտենականութիւնը միևնոյն բանն են ինչպէս որ փոշին ու անցաւոր բանն էլ միևնոյնն են։

Հազարաւոր տարիներ են, որ մահկանացու մարդիկն այս բանը լաւ հասկացել են. հազարաւոր տարիներ են, որ մարդիկն այս մեծ ճշմարտութիւնն ասել են՝ թէ միայն աստուածայինն յաւիտեան կմնայ։ Քրիստոս աշխարհք եկաւ. աշխարհիս մարդոց այս ուրուեցրեց թէ՝ ով որ Աստուծոյ մէջն է, մշտնջենաւոր Աստուածն էլ նորա մէջն է։ Ու միլիոնաւոր մարդիկ նորան աղաղակեցին և նորա սուրբ անունն իբրև միակ զարկ իրանց վերայ առան. բայց իրանց ազօթքը սրտից չէր, իրանց աստուածպաշտութիւնն՝ ամենօրեայ արտաքին մի գործ էր, Քրիստոսին ընդունեցին ու նորա պատկերը գարձան, բայց չճանաչեցին Նորան. փառաբանում էին նորա առաքինութիւնը, բայց իրանք առաքինութիւնից հեռու էին. աղաչում՝ պաղատում էին յաւիտենական եղջանկութեան արժանանալու համար, բայց իրանց մեղսական վայելչութիւնների ոչ մի ժամը նորան չզոհեցին։ Յաւիտենական, աստուածային բանի վերայ մտածում էին այն ժամանակ, երբ որ արդէն իրանց մահուան սարսափելի ժամը գալիս, հասնում էր. և երբ որ գերագոյն բարին, որով հանդիպ ընկել էին այս կեանքում՝ իրանց օրօրոցից սկսած մինչև իրանց գերեզման մտնելն, արդէն անհետանում էր, ինչպէս որ անհետանում էր աշխարհիս տակն բանն. բայց այս աշխարհիցս բաժանուելու րոպէում թափած արտասուքն ու մորմոքը դրածներն իբրև հաստատ որոշումն, ինչ որ արդէն կորել է, նորա տեղը չեն բռնել. ինչու որ արտասուքը՝ միայն արտասուք է, դեռ առաքինութիւն չէ. և մարդուս՝ իր մահուան վերջին ժամին մորմոքն արած շատ ու շատ բարեպաշտական որոշումներն, որ իր աչքը նոր բացուելուցն ու սարսափելով հանդիպանալուցն է անդկացրած աշխարհքից իր սաստիկ կերպով խաբուած լինելը, մորի բարեպաշտական որոշումներ են միայն, ոչ թէ աստուածային գործերով չանդկացրած մի կեանք։

Սուրբ գրքի հետևեալ խօսքն՝ իբրև յորդորական մի սուրբ ձայն հնչում է սրտիս մէջը թէ՝ «Ա՛յո՛՝ աշխարհս է՛ր վայելչե՛նե՛ներովն անց է կենա՛ս. քայց ով որ Աստուծոյ կամքն է կատարո՛ս, նա յա՛ւիտե՛ան կենայ»։

Ո՛վ դու վսեմ՝ յաւիտենութեան մխիթարութիւն, որ իմ սրտիս

մէջ ձայն են տալիս աշխարհ-քիւս ու իմ խղճմտանքիցս, Քրիստոսի ու նորա աշակերտների կոչմից։ Ես հրաշալի զօրութիւնուն թափանցիր իմ սրտիս խորերը։

Երևելի մահարձաններն էլ, մարդոց ամենամեծ գործերն էլ անցնում են, բայց ես մնում եմ։ Երկրագունդն էլ մի օր կծերանայ, երկնքի լուսաւոր մարմիններն էլ մի օր, կարելի է, հանգչեն, բայց ես մնում եմ։ Ամէն բան պէտք է կորցնեմ, ամէն բան ինձանից պիտի դուրս գայ ինձ համար պիտի էլ չլինի, — միայն մի բան կարող եմ ինձ պահել, մի բան միայն ինձ կպահպանի, Աստուծոյ յաւիտենական անմահութիւն։

Ի՜նչպէս ես էլ երկար ժամանակ մոլորուած մնի էի գալի խաւարի մէջ։ Ինչո՞ւ համար ես էլ պատուէրի իմ կեանքիս բաղդատութիւնն, իմ գերագոյն բարին՝ ուրիշ ամեն բանների մէջ, միայն այնտեղ չէ, ուր որ էր իսկապէս ինչո՞ւ համար խելք ու միտքս երբեմն երբեմն սաստիկ տալիս էի մեծ կարողութիւն ձեռք բերելու և աչքս չէր կշտանում ունեցածիցս։ Ես հո գիտէ՞ի, որ հարստութիւնը մարդուս չէ բաղդատուողնում, ինչու որ ամենամեծ փառքն ու կարողութեան տէր մարդն էլ շատ անգամ կարող է ամենաողորմելի մահկանացուն լինել։ Ես հո գիտէ՞ի, որ տկլոր եմ աշխարհք եկել, որ ոչինչ հետս տանելու չեմ՝ բացի այն կատարելութիւններից, որ իմ հոգիս ազնուացրել են։ Ես հո գիտէի, որ էստոնք են այն գանձերն, որ ես երկնքումը կարող եմ գանձել, ինչո՞ւ համար այս գանձերը չէի հաւաքում։

Ինչո՞ւ համար իմ ունայնամտութիւնս շատ անգամ այնպիսի տղայամիտ կերպով ցանկանում էր ու փափագում արտաքին փառաւոր կեանքի՝ երբ թէ մարդուս գերագոյն բարին այդ էր միայն։ Ես հո գիտէ՞ի, որ գեղեցկութիւնն մի քանի տարուան մէջ կորչելու բան է, և վա՛յ է նորան, որ ոչ մի՝ գիւն ունեցող՝ մնայուն բան ձեռք բերել խելքը չի կորել։ Հոգւոյ ազնուութիւնն միայն յաւիտենական փայլ ունի, և միայն կարող է տևողութիւն ունենալ յաւիտեան անթառամ մնալ թարմ մանկական հասակով։ տարիքն հոգւոյ այդ ազնուութիւնից ամենևին մի բան էլ չէ կարողանում եղծանել, ինչու որ յաւիտենականը ժամանակաւորից բարձր է ու վսեմ, ինչպէս որ Աստուած ինքն։

Ինչո՞ւ ես շատ անգամ սաստիկ կերպով ընկնում էի մեծ անունի ու փառքի ետևից, որ մարդոց առաջ մեծ ու փառաւոր ման լի-

նիմ։ Ի՞նչպէս կարողանամէի ես իմ ժամանակի մարդոց գովասանքն ցանկութիւններիս հասնելու իմ ամենամեծ նպատակը համարել։ Ո՛վ իմ պատուամոլութեան յիմարութիւն ինչպիսի կեղծիքներով ու երազներով էիր լինձ շատ անգամ խաբում, խելքիցս հանում, ու ինչպէս շատ անգամ մոռացնումէիր լինձ սրտիս հանգստութիւնն, որ կորչնումէի։ Ես հօ, լա՛ւ գիտէք, որ հոգիս տուի թէ չէ, մարդոց շողոքորթութիւններից էլ ոչ մի բան իմ ականջս չէլսիլ։ Ես հօ ճանաչումէի մարդոց ան հաստատ ու փոփոխական խելքի տէր լինելն որպէս և նորանցից շատերի նախանձոտութիւնն։ Ի՛նչպէս կարողացայ ես այս երազական ցնորքներին ամենայն բան զոհել։ Միայն անմահ Աստուծոյ մէջն է անմահ փառքը։ Միայն ամենագէտ Աստուծոյ մեր վերայ ունեցած միտքն ու արած որոշումն՝ մեր արժանաւորութեան մասին՝ հաստատ են ու անփոփոխ։ Արդեօք ես շատ դյժ թափելով աշխատե՞լ եմ երբէ՞ք նորան հաճոյ լինելու, ինչպէս որ ամենայն կերպ աշխատել եմ փոփոխական խաբուղ, սխալական մարդոց հաճոյանալ։

Ինչո՞ւ համար ես երկրաւոր ուրախութեանց բաժակը վայելելն այնպէս համարեցի, որ իբր թէ հոգուս գերագոյն բարին է։ Տե՛ս, հիմա ամէն բանն էլ փոխուեց, ուրիշ կերպ եղաւ։ Ընկերական կեանքի ամեն զուարճութիւններն, ամեն տօնակատարութիւններն, մեծահաց սեղաններն ու ինջոյքներն, որոց մէջ շատ ուրախութիւն տեսի ու արի, անց կացան, գնացի՛ն։ ուրախութեան երգերն, օգումը ցնդեցին, այդ քաշած վայելչութիւնների հետևանքը զղջման հառաչանքս է, որ սրտիցս է դուրս գալի՛ս։ Հիւրերի ասել, խօսելը, վլվլոցն էլ չկայ։ գերեզմանատան լռութիւն է տիրում այն ուրախութիւններից յետոյ դատարկ դահլիճներումը։ Ծաղկեայ պսակով գլուխը զարդարած կաքաւոյ ծաղկահատակ օրիորդի մեռած գլխին դնելու այժմ պսակ են հիւսում, և երբեմն այնչափ զուարթ, աշխոյժ և ուժեղ պատանին՝ ծերութիւնից դողդողալով է մանը գալի՝ փայտը ձեռին։ Աչքերիս առջև վայելչութիւնը–ինքնին անց կենում, քայլ Աստուծոյ կամքը կատարելն ահա ասեմ՝։ Աստուծոյ նման լինել՝ սրբութիւնով, կատարեալ լինել, ինչպէս մեր երկնաւոր Հայրը կատարեալ է, մանրուք սխալ ու վատք ունենալ, ինչպէս Պրիամոս էր, մարդոց սիրել ու բաղ-

տաւորեցնել, բաղտաւորեցնումէր իւր սիրուին ինչպէս նա, մեր ամեն կողմը սրտի գոհունթիւն, ուրախութիւն և օրհնութիւն տարածել, ինչպէս նա անումէր, — ահա այս ասածներս անելն է Աստուծոյ կամքը կատարելն որոյ համար էլ աշխարհք ենք ծնած։

Ամեն բարիքներից գերագոյնն առաքինութիւնն է։ Առաքինի կեանք վարելու համար Աստուած՝ մեր երկնաւոր Հայրն իւր ամեն զաւակներին համար ասպարէզ է բացել. այստեղ թագաւորողն իշխանն՝ ամենաազգատ խրճթի բնակչից առաւելութիւն, կամ գերազանցութիւն չունի, ոչ էլ հարուստն աւելի այժ և իշխանութիւն քան թէ կարօտ մարդն, յաղթութեան պսակը ձեռք բերելու համար ամէնքն էլ հաւասար ուժեր են ստացել։ Փիլոսոփանութիւնը՝ քանքարաւոր մարդու համար, գահը թագաւորի որդոյ համար, լաւ անունն ունևոր մարդու համար իրանց տրուած քանքարներ են, որ պէտք է շահեցնեն. բայց մի բանն ամեն մեկին չիյարմարիլ. կեանքի մէջ բազմատեսակ վիճակներ ունեցող մարդիկ պէտք է լինին անշուշտ. շնորհքներն այլ և այլ կերպով պէտք է տրուած լինին, որ մեկը միւսին ծառայի. — բայց աստուածային այսինքն է՝ գերագոյն բարին հաստատակաց է, ինչպէս որ Աստուած ամենեցուն Հայրն է, ինչպէս որ մենք ամենքս էլ նորա զաւակներն ենք։ Ամեն մարդ կարող է հասնել այդ բարւոյն և դորա համար էլ մարդուս համար ամենամեծ ու ամենաթանկագին բանն է։

Իմացիլ ես արդեօք, թէ ինչն է հոգւոյ խաղաղութիւնն։ Սրտի այն հանգստութիւնն, որ ղգումես թէ՝ երկնքի ու երկրի հետ հաշտ ես ու ամենայն վտանգներից բարձր։ Իմացիլ ես արդեօք սրտի այն երանելի անդորրութիւնն, որ ղգումես միայն քո գերազանցութիւնովդ քո պարտքերդ արդէն կատարած լինելուդ և Աստուծոյ հաճոյ լինելուդ, և որ մահդ էլ, եթէ գար, քո սրտիդ այդ անպորութիւնը չէր կարող խանգարել։ Այս էր քո անմեղութեանդ զօրութիւնն, այս էր քո մաքուր խղճմտանքիդ վարձատրութիւնն — այս՝ գեղեցիկ քաղէ վայելելը էր։

Բայց այն բաղտաւորութիւնն, որ սատանի փրփուրի նման շուտ ոչնչանում է, ամենավերջին ու գերագոյն բաղդաւորութիւնը չէ կարող լինել։ Մի ահագին հակառակութիւն պիտի լինէր մեզանից դուրսն՝ այսինքն աշխարհի և մեր ներսն, այսինքն մեր խղճմտանքի մէջ։ Մեր կարծիքի վերայ անջնջելի կերպով գրուած օրէնքը պիտի

յիմարութիւն լինէր և երկրաւոր բարիքի անցաւոր վայելքն՝ պիտի ընդունուէր ամենացանկալի բանն, որ Աստուած մեզ համար իբր թէ նպատակ է դրել, որ հասնենք։ Բայց մարդոց ամէն փորձառութիւնն որպէս և շատ խմաստուններուն խմաստութիւնը այդ մտքին հակառակ է. մինչև անգամ աշխարհիս բոլորովին փչացած մարդն էլ վերջապէս հասկանում է դողալով, որ ստեղծող Աստուած կայ, որ մեզ առաքինութեան և ոչ թէ մոլութեան համար է ստեղծել։

Միայն առաքինութիւնը կեանքի ամէն հանգամանաց մէջ մարդուս երջանիկ է անում, և երբէք չէ դադարում իւր խաղաղիկ ուրախութիւններովը նորան վարձատրելու, պսակելու։ Ամէն մի վիճակի ու դրութեան մէջ մարդուս սրտի գոհութիւն է պարգեւում, աղքատի սիրտը մեծ ուրախութիւնով է լցնում, այն աղքատի, որոյ համար մի կտոր ցամաք հացն միայն իւր փառաւոր ճաշն է, և որոյ համար մի ումպ ջուրն աւելի արժէ, քան մի բաժակ գինին, որ խմելուէ երկիւղից անհանգիստ սրտով ու հոգսերով։ Սորվեցնում է արուսքին երևոյթը ջոկել իրի իսկութիւնից, այնպէս որ մենք առաջուանից պատրաստուած ենք լինում ամէն մի կորուստ ունենալու համար, մինչև անգամ այնպիսի բանի կորուստն ունենալու, որ մեզ համար ամենաթանկագին է։ Մի անդգամի, մի անիրաւի հայհոյիչ լեզուն կարող է մեր անունը կոտրել. անարդարութիւնը կարող է մեզ մարդոց հաշուից դուրս ձգել իբրև անկարող, անպիտան, կամ անընդունակ. մի հիւանդութիւն կարող է մեզ բոլորովին անպէտք մարդ դարձնել, անդամալոյծ անելով՝ բայց ոչ մի բան չէ կարող Աստուած մեր սրտից հանել, ոչ մի բան չէ կարող մեր անմեղութեան գիտակցութիւնը մեր մէջը խեղդել, սպանել. ոչ մի բան չէ կարող պղտորելով մեր սիրտն, այն մխիթարութիւնից մեզ զրկել, որով մեր ամենագառն կորուստ ունեցած ժամանակն էլ մեր աչքն երկինք ենք քցում ու ասում, «Տէրը տուեց, Տէրն առաւ, օրհնուած լինի Նորա անունն»։

Աշխարհիս ամէն վայելչութիւնն անց կկինայ, բայց ով որ Աստուծոյ կամքը կկատարի, նա կմնայ յաւիտեան։ Այն յաւիտենական Աստուծոյ նման յաւիտեան մնում է առաքինութիւնը. նորանով պսնուացած հոգին կեանքի շփոթ խառնակութիւնից վեր է սլանում, — ոչ մի բան չէ կարողանում նորան պատել

նաւաբեկութիւնից, երբ որ իւր հողային պատեանը վիշտ վիշտ է լինում, ոչ մի բան հեռը չէ վեր առնում, այլ այն միայն, ինչ որ ինքն դարձել, եղել է: Երկրաւոր բարիքը նորա սեփականութիւնը չէ, այլ մարմնոյ համար էր միայն ձեռք բերուած և մարմնովը վայելեց, բայց հոգևոր կատարելութիւնները հոգւոյ համար էին աշխատած, որոնցով պայծառանալով յաւիտենական կեանքը մտաւ:

Մի ցնորուած մարդու նման թափառումէի մինչև ցայժմ աշխարհիս երեսին, գերագոյն բանը հող ու վիշտ դառնալու բաներէ մէջ էի պատւում, իսկ յաւիտենականն՝ անցաւորի մէջ լաւ հասկանումէի, որ ինձ խաբումէր սերն ու բարեկամութիւնը, բաղտաւորութիւնն ու պատիւը. բայց էլի տուէրի նման բանի ետեւից էլ ընկնում միշտ աւելի նոր. — մեծ եռանդով ու փափագով շատ չարչարուեցի. բայց երբէք բոլորովին չհասայ. և եթէ որ հասած լինէի, դորանով արդեօք աւելի գո՞հ, աւելի՞ բաղդաւոր եղած կլինէի: Դեռ էլի իմ հոգիս հեռացնելով յաւիտենական բանից, շատ երկար ժամանակ պիտի զոհեմ անցաւորին: Ո՛չ, ոչ իմ ստեղծող Աստուածս, ես պէտք է շտապեմ, վազեմ այն աւելի լաւ բանին հասնելու, որ դու ինձ ցոյց ես տալիս: Այս երկրաւոր կեանքի թագաւորութիւնը չէ, որոյ մէջ պարունակվում իմ ընթացքիս սահմանն, այլ աստուածային բանի թագաւորութիւնն: Սորա համար պէտք է խնդրեմ, պտտեմ առաջ Աստուծոյ արքայութիւնն, որ Յիսուս աշխարհիս վերայ սորվեցրեց իւր քարոզներումն:

Ինձ համար և երբ որ կտեսնեմ, որ իմ անհաստատ ուժերիս վերայ յոյս կապել չեմ կարող. երբ որ կտեսնեմ, որ երկրաւոր հրապոյրներ, իմ աւելի բարձր, աւելի վսեմ նպատակներս ուզում են ինձ մոռացնել տալ. երբ որ զգայական բուռն ցանկութիւնից ինձ պիտի կորցնեմ և անպիտան մտքերից պիտի տարուիմ — այդպիսի ժամանակ, ով իմ վրկիչ, Քո սուրբ կեանքիդ մասիկ տամ, որ սիրտս առնում ու պօրանամ: Այն ժամանակ Քո հնչի իմ սրտիս խորքում Քո ձայնդ թէ՝ ով որ մինչև վերջը կհամբերի, նա կապրի:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԱՑԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Բրիտանական և Ամերիկական Աստուածաշնչի ընկերութիւնները ազգերը քրիստոնէական հաւատի լուսով լուսաւորելու համար Աստուածաշունչը ամեն լեզուներով թարգմանում տարածում են, գրեթէ Հրիաբաս, շատ չնչին գնով։ Նպատակը ի հարկ է շատ գովելի է և ձեռնարկած միջոցը նպատակայարմար, բայց որչա՛փ շատ գովելի նպատակներ իզուր են գործադրւում, և քրիստոնէական սիրոյ աւետարանը պատրուակ բռնած որչա՛փ սոսկալի ատելութիւն և հակառակութիւն են սերմանում Քրիստոսի եկեղեցու մէջ, և զանազան անտեղի առարկութիւններով պղտորում խեղճ ամբոխի միտքը։

Այս տեսակ խառնակարարների և ամբոխիչների խումբ կազմում են յիշատակեալ ընկերութեանց գրավաճառ գործակատարներն ու քարոզիչները, որոնք Աստուծոյ բանը հեթանոսների մէջ քարոզելու և տարածելու փոխանակ՝ 1582 տարիներից հետէ գոյութիւն ունեցող եկեղեցու մէջ պառակտումներ են ձգում՝ առանց խըղճահարուելու զրախօսութիւններ յերիւրելով այդ եկեղեցու նուիրապետութեանց դէմ, և կարծիքի ենթարկելով մեր երանաշնորհ թարգմանիչների մեղ Թողած ամենաստուրբ աւանդը—Սուրբ Գրոց անսպառ և հարազատ թարգմանութիւնը, որ երևելի գիտնականներից անգամ՝ գնահատուած է եղել միշտ որպէս ընտիր թարգմանութիւն։ Դոքա, այդ քարոզիչներն ու գործակատարները դարուս սկզբից ներս սողոսկելով Կովկասեան աշխարհը և օգուտ քաղելով հայերիս անընտրող հիւրասիրութիւնից, որով և ոտքի կռուան հաստատելով՝ չեն խղճահարւում միամիտ գիւղացիների և տգէտ ամբոխի առաջ պախարակել նաև մեր Աստուածաշունչ սուրբ գիրքը ասելով թէ, սխալներ կան մէջը, և իրանց այլանդակ աշխարհաբառ թարգմանութեանց վերայ պրոշմելով «Եբրայական և Յունական բնագիրներէն թարգմանուած» մակդիրը՝ վաճառում են թեթևագին, ոքնելով գնել ժողովրդի հաւատը և նոցա իրանց ուռկանը ձգելով՝ մայրենի եկեղեցու հակառակ գլնել։ Բայց տեսնենք այդ քարոզիչներն ու գործակատարները Սուրբ Գրոց ո՞րպիսի թարգմանութիւն են տալիս մեր միամիտ ժողովրդին մեր սեպհական ունեցածը պախարակելուց յետոյ։ Եւ

Նոցա մեզ տուած « Երբայական և Ցունական բնագիրներէն Թարգմանուածները » ծրքան նմանութիւն ունին իրար հետ, որ ապացուցանէ թէ ծրչափ, հարազատ են այդ Երբայական և Ցունական բնագիրներէն Թարգմանուածները։

Մեր առաջ դրած է « Երբայական և Ցունական բնագիրներէն Թարգմանուածների » երկու տեսակը, երկուքն էլ տպած Կ. Պոլսում Ա. Ցակոբ Պօյաճեանի տպարանում, առաջինն Տաճկահայոց բարբառով 1873 Թուին, իսկ երկրորդը՝ Արարատեան բարբառով 1883 Թ։

Բայց անեղք մի որ և է տեղ Երբայական և Ցունական բնագիրներից Թարգմանուած երկուսի մէջ էլ, որ իւ հարկէ բացի երկու բարբառների յատկայեալ ձևից ուրիշ տարբերութիւն պիտի չունենան։

Երրորդ ընդհանրական Թուղթ Ցովհաննու գլ. Ա։

Տաճկահայոց բարբառով 1873 Ը. 1, Երէցէն Գայիոս սիրելիին, որն որ ես կը սիրեմ ճշմարտութեամբ։ 2, Սիրելի, աղօթք կընեմ ամէն կողմէ յաջողութեան մէջ և առողջ ըլլաս, ինչպէս որ քու հոգիդ ալ յաջողութեան մէջ է։ 3, Ինչու որ շատ ուրախացայ, երբ որ եղբայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայեցին

Արարատ. բարբառով 1883 Թ. 1, Երէցը, սիրելի Գայիոսէդ, որին ես սիրում եմ ճշմարտութեամբ։ 2, Սիրելի, աղօթք եմ անում որ ամեն բանի մէջ յաջողակ և առողջ լինիս, ինչպէս քո անձը յաջողակ է։ 3, Վասն զի շատ ուրախացայ երբոր եղբարքն եկան . . . ։

Այս երեք տուն Թարգմանութեան տարբերութիւնը.

1873-ի մէջ	1883
Երիցէն բաց. հոլ.	Երէցը ուղղ. հոլ.
Կոպէ, Թող բառի տարբերութիւնը, բաց. հոլ.	բանի մէջ, ներգ. նոլ.
յաջողութեան մէջ ներգ.	յաջողակ. ուղղ.
հոգիդ	անձը, բառին տարբերութիւն.
Թանի մը եղբայրներ	Թանի մը չըկայ

Ահա այս տարբերութիւնները, թէև ըստ երևութին աննշան, բայց ցոյց են տալիս թէ ինչպէս քմահաճոյ թարգմանութիւն են արել յունագէտ և երբայեցոյս թարգմանիչները։ Դնենք նաև մեր Աստուածաշնչից նոյն հատուածը

1, «Ցերիցուէ առ Դայիոս սիրելի· զոր եսդ սիրեմ ճշմարտութեամբ։

2, Սիրելի՝ վասն ամենայն իրաց քոց ջողութեան և առողջութեան՝ աղօթս առնեմ· որպէս է հոգի քո յաջողութիւն անձինդ քո։ 3· Ցոյժ ուրախ եղէ ի գալ եղբարց, և լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ։

Բայց անենք մի ուրիշ տեղ·

(Նայի մարգարէ գլ· 4)·

1873 թ·	1883 թ·
2, Ով ոտք հանեց պըտուըը արևելքէն,	Ով զարթեցրեց արևելքից (նորան,) որին կոչ-ին պրպտ-ըս-ին-ն՝ ի-ր ճա-ղո-մը։
Ո- ղանիկա էր ղա-իղնէրս-ն կանչէց,	
Ազգերը անոր առջևը դրաւ,	Նա ազգերը գցո-ղ նորա առ-ջևը, և նա թագաւորնէր է նուաճում։»
Ու թագաւորներս- վրայ (անոր) պէրէլ պս-ս-» ։	

Տարբերութիւնը բառերի և մտքերի կողմից՝ բացայայտ է, և չերկարացնելու համար չենք վերլուծում· միւս կողմից, 1873 թուինը ոտանաւորի ձևով է դրուած իսկ 1883-ինը ընդարձակի ձևով· մինչդեռ բնագիրը կամ ոտանաւորի ձևով է եղել կամ ընդարձակի։

Մեր Աստուածաշնչում նոյն հատուածը։

«2, Ո՞զարթոյց յարևելից զարդարութիւն և կոչեաց զնա զհետ իւր· երթիցէ և տայէ հատուցումն յանդիման հեթանոսաց, զարհուրեցուսցէ զթագաւորս»։

—o—

Բայց անենք մի ուրիշ տեղ.

Սաղմ. խթ. 5.

1873. թ.	1883 թ.
Ինչու վախնամ չար օրերուն մէջը,	*Ինչու վախենամ ես չար օրերուումը, (թէ) իմ խորամանկ ընդառաջ անօրէնութիւնը պատուում է ինձ:*
Երբ որ դարանակալներուն անօրէնութիւնը պատէ:	

Յարբերութիւն

Երբ որ դարանակալներուն	(թէ) իմ խորամանկ թշնամու
չորս կողմս	ինձ

Մեր Աստուածաշնչից (Սաղմ. խզ. 6:

Ընդհէր քնաւ երկնչիմ ես յաւուր չարի, զի անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ եղեն զինեւ:

Առակ. ԻՋ.

1873	1883
8. Ցնծալին պարկեշտ տղան Քաղաքացի մը մէջ (պարսպակապ) իւրեանց ծերը (գնդակին) կը նայի:	8, (Ինչպէս որ) իւրն են ծերունի՝ պարսպապինի մէջ շլընդոյ, այնպէս է և ցնծալին պարկեշտ տղան:
9. Առակը ցնծալին բերնին մէջ, Գինովին ձեռքը մտնող փուշին պէս է:	9. Այբբառի ձեռքը մատ փուշը, և առակը՝ ցնծալի բերանը:
15. Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը խօթէ,	15. Ծոյլը իր ձեռքը կը կոխէ անօթի մէջը, և նորա համար ծանր է նորան եր պանել եր բերանը:
(Ո՞) բերանը (անգամ) պանելու դժուարութիւն կը ղգայ:	
17. Իրենը վերած պարկեշտ համար բարկացող անցաւորը շունը ականջներէն բռնողին (պէս) է:	17, Շունը ականջներէնդ բռնողի՞ է այն անցաւորը որ գրգռելու՞ է երանը վերած պարկեշտ համար:

Տարբերութիւնը ակներև է.

Մեր Աստուածաշնչից (Առակ ԻԶ.)

8. Որ դնէ քար ի պարսատիկս՝ նման է առն՝ որ դնէ պատիւ անմտի: 9. Փշալից լինին ձեռք արբեցողի. և ծառայութիւն ի ձեռս անզգամի: 15. Թագուցանէ վատ զձեռս իւր ի ծոց իւրում՝ և ի բերան իւր դանդաղի տանել: 17. Որպէս որ բռնէն հարկանիցէ զշան ձեռաց՝ նոյնպէս և մարդ որ անկանի յայլոյ դատաստան»:

Եթէ շարունակենք այսպէս՝ այն ժամանակ հարկ կը լինի ամբողջ Սուրբ Գիրքը երեք օրինակ ընդ օրինակել տարբերութիւններով. ուրեմն իրև օրինակ այսքանը դնելով՝ և տարբերութիւնները գծելով շատանանք՝ յաւելցնելով միանգամայն որ ինչպէս ընթերցողները տեսնում են Բրիտանական ընկերութեան հրատարակած Սուրբ Գրոց լեզուն էս շատ ծանր է և տաղտկալի, մինչդեռ լեզուի գեղեցկութիւնն ու վսեմութիւնը առաջին նպատակ պայմաններն են ընթերցանութեան մէջ յարատևելու, իսկ անհարթ լեզուն և նսեմ ոճը մարդու վերայ քնեցնող թմրութիւն են բերում:

Բրիտանական և Ամերիկական Աստուածաշնչի ընկերութեանց գործակատարների ջանքը քրիստոնեայ ազգերի միջից եկամուտներ անելու նման է աւտրայած արտորէից մէջ որոմ սերմանելուն, ճշմարիտ առաքելութիւնն է հեթանոսների մէջ ծաւալել քրիստոնէութեան լոյսը. ցանկալի է գիտենալ թէ տարին քանի միսիոնական են լուսաւորում քրիստոնէական հաւատոյ լուսով: Առ այժմ այսքան:

Յուսիկ Վարդապետ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(ԸՍՏ Փ. ՀԱՐՄՍԻ).

(Շ-բոնակ՝ Աբաբաւ, Ր. Ը.)։

3. Դեկարտի հոգեբանութիւնը։ Դեկարտը (1596—1650) շատ լաւ է որոշում հոգին նիւթից, ինչպէս խորհողը տարածեալից (այն ինչ հները հոգին նիւթից զանազանումէին ինչպէս շարժիչը շարժուողից)։ Ըստ Դեկարտի՝ նիւթի էութիւնը կամ բնութիւնը տարածութեան մէջ է կայանում, իսկ հոգւոյ էութիւնը կամ բնութիւնը՝ խորհդածութեան մէջ։ Հոգին չունի ո՛չ երկայնութիւն, ո՛չ լայնութիւն, ո՛չ հաստութիւն, ո՛չ պատկեր, կարճ ասել, ո՛չ մի երկրաչափական ապացուցութեան մատչելի չէ։ Ամեն մի մարմին իւր տարածականութեան յատկութեան հիման վերայ բաժանուող է. ընդհակառակն, հոգին անբաժան է, կամ այլապէս ասենք, նա ոչ մի մասն չունի, բոլորովին պարզ է։ Հոգին մարմնից զանազանվումէ ինչպէս գործունեայ սկիզբն կրաւորականից։ Որովհետև մարմնոյ բնութիւնը տարածականութեան մէջ է կայանում, իսկ տարածականութիւնը գործունէութիւն չէ, այլ դրութիւն, ուրեմն և մարմինը գործելու ընդունակ չէ, այլ միմիայն կարող է գործողութեան ենթարկուել։ Նիւթի ամեն տեսակ գործունէութիւնը նոյն իսկ նիւթի ուժով չէ առաջանում, այլ նիւթից տարբեր մի պատճառի միջամտութեամբ։ Ընդհակառակն, հոգւոյ բնութիւնը խորհրդածութեան մէջ է կայանում, իսկ խորհրդածութիւնը գործողութիւն է, ուրեմն հոգին միմիայն գործումէ և չէ կարող կրաւորական դրութեան մէջ գտնուիլ։ Հոգւոյ դրութիւնն ինքն իրանից է առաջանում, նա ինքն ունի ձգտումն և կամք։ գործումէ յատուկ իւր յօժարութեամբ։

Հոգւոյ դլխաւոր զանազանութիւնը մարմնից է նորա բնաւորութեան կամ էութեան հիման վերայ եղած հոգեբանական երկդիմութիւնը։ այսինքն մարդոյ մէջ միմիանցից տարբեր երկու սկզբնների ճանաչելն է։ Ըստ Դեկարտի՝ մարդս երկու կատարեալ զանազան տեսակ հոգեկան և մարմնական բնութիւնից է բաղկանում։ Առաջինը խորհող, անհատ (պարզ) ինքնագործ բնութիւն է, երկրորդը տարածեալ, բաժանուող (մասերից բաղկացած), կրաւորական բնութիւն է։ Այս երկու բնութիւններն էլ սկզբնական են, այսինքն ո՛չ հոգին է մարմնից առաջացած և ո՛չ էլ մար-

միևնույն՝ հոգուց՝ այլ երկուսն էլ անմիջապես առաջացել են երրորդից՝ մի գերագոյն բնութիւնից կամ Աստուածանից։

Մենք միատեսակ ճշմարտութեամբ ենք խոստովանում թէ՛ հոգւոյ և թէ՛ մարմնոյ բնութիւնը կամ գոյացութիւնը։ Բայց գանազանութիւնը նորանում է կայանում, որ հոգւոյ ճանաչողութեան ճշմարտութիւնն ինքն իրան է յայտնվում, այն ինչ մարմնոյ ճանաչողութեան ճշմարտութիւնը մի քանի ապացոյց է պահանջում։ Մինչև անգամ մի որևէ ճանաչողութեան ճշմարտութեան վերայ կասկածելով ես իմ հոգւոյ գոյութեան վերայ կասկածել չեմ կարող, որովհետև նոյն իսկ կասկածանքը մի տեսակ խորհրդածութիւն է՝ խորհող բնութեան գոյութիւնն ճանաչվում։ Կասկածում եմ, նշանակում եմ թէ խորհում եմ, խորհում եմ նշանակում եմ թէ գոյութիւն ունիմ։ Այսպէս, խորհող բնութեան ճանաչողութիւնը կասկածանքին ենթարկուել չէ կարող. այս ճանաչողութեան ճշմարտութիւնն ինքն իրան ակներև է առանց մի որևէ ապացուցութեան։ Ընդհակառակն, տարածեալ բնութեան, մարմնոյ, ճանաչողութեան ճշմարտութիւնն այդպիսի յատկութիւն չունի։ Մարմնոյ բնութիւնը կամ տարածութիւնը, իհարկէ, ես աչքիս առաջ այնպէս որոշ և պարզ եմ ներկայացնում, ինչպէս որ հոգւոյ բնութիւնը կամ խորհրդածութիւնը։ Բայց այնու ամենայնիւ տարածեալ մարմնոյ ձևը (կերպը) միմիայն իմ մտքումն է, որի նմանը կարելի է իմ խորհրդածութիւնից դուրս՝ ոչ մի օրինակ չկայ։ Ուրեմն այստեղ անհրաժեշտ է լինում իմ հաւատքի փոքր ինչ հիմք տարածեալ աշխարհի իսկական գոյութիւնը ճանաչելու համար։ Այսպիսի հիմքը Դեկարտը Անտուածոյ ճշմարտութեան մէջ է գտնում։ Դեկարտն ենթադրում է, որ եթէ մեր պարզ և որոշ հասկացողութիւնը նիւթի տարածեալ բնութեան վերայ սուտ լինէր, այն ժամանակ սա կը նշանակէր, որ Աստուած մեզ դիտմամբ դէպի մոլորութիւն է տանում, որ ենթադրել չէ կարելի, որպէս զի մեր պարզ և որոշ հասկացողութիւնն արտաքին աշխարհի մասին սխալ լինէր։ Այսպէս թէև մեր հասկացողութիւնը հոգւոյ և նիւթի մասին ուղիղ են, բայց հոգերանական հասկացողութեան ճշմարտութիւնն անընդմիջական է, իսկ փիզիքական հասկացողութեան ճշմարտութիւնը կարօտ է մի քանի ապացուցութեանց։

Որովհետև հոգւոյ բնութիւնը խորհրդածութիւն է, այս պատճառաւ էլ հոգեկան զանազան կարողութիւնները (ընդունակութիւնները) միմիայն խորհրդածութեան ձևափոխութիւններն են։ Դեկարտը հոգւոյ մէջ որոշում է երկու կարողութիւն՝ բանականութիւն կամ կամք, այսինքն ճանաչողութեան ընդունակութիւն և դործողութեան ընդունակութիւն։ Արիստոտէլեան հոգւոյ բաժանումն բուսականի, կենդանականի և բանականի նոյն իսկ նորանով է հերքվում, ճանաչողութիւնը կատարվում առարկաների մասին մտապատկերների կազմելու միջոցով։ Մի քանիսը մտապատկերներից յարուցանվում են զգացողութիւնների գործունէ-

ուԹեամբ, մի քանիսն էլ կազմումեն բանականուԹեան հինօրեայ սեպհականուԹիւնն, որ նորան ընդառաջ էր։ Առաջին մտապատկերները պարզ և որոշ չեն, այսինքն չեն կարող մեկը միւսից որոշուել։ Երկրորդ մտապատկերները պարզ են, այսինքն մեկը միւսից լաւ է որոշվում և իւրեանց մասերի մէջն էլ միմեանցից որոշվումեն։ Զգայական մտապատկերներն առարկաների իսկական բնուԹիւնն չեն արտայայտում, օրինակ, առարկաների մէջ իսկապէս չկայ ո՛չ գոյն, ո՛չ տաքուԹիւն, ոչ հոտ ո՛չ համ։ Ընդհակառակն, բանական ընդհանուր մտապատկերների մէջ առարկաների իսկական բնուԹիւնն է արտայայտվում, այսինքն արտաքին առարկայի տարածուԹիւնն է արտայայտվում։ «Մտապատկերների» երկու տեսակ բաժանումն—ստացական և ընդհանրոյ գիտուԹեան մէջ առաջին անգամ Դեկարտի շնորհիւ մտաւ, դասելով նոցա մաթեմատիկական և երկրաչափական շարքումը, այսինքն, էուԹեան, պատճառաբանուԹեան և Աստուծոյ մտապատկերների շարքումը։

Դեկարտի հայեացքով կամքն ազատ է և հէնց այս ազատուԹեան շնորհիւ կարող է նա մարդուն դէպի մոլորուԹիւնը տանել։ ՄոլորուԹիւնը նորանումն է կայանում, որ մեր կամքը կանխապէս իբրև ճշմարտուԹիւն այնպիսի գիտակցուԹիւններ է ընդունում, որոնք մուԹ և պարզ չեն։ Բուրմն, մոլորուԹիւնը նոյն իսկ գիտակցուԹիւնից կախուած չէ, այլ գիտակցուԹեան վերայ կամքի ներգործուԹիւնից։

Թէև մարմինն և հոգին իւրեանց բնուԹեամբ չեն կարող իսկական փոխադարձ ներգործուԹեան մէջ լինել, այնու ամենայնիւ նոքա մշտական հաղորդակցուԹեան և համապատասխանուԹեան մէջ են գտնվում։ Հոգուոյ մարմնական գործարանը գլխի ուղեղն է, այսինքն նորա այն մասը, որ անուանվում ուղուղձաձև լորձապարկ։ Մարմնոյ հոգուոյ հետ ունեցած կապը գլխաւորապէս երեւում կրքերի մէջ, այսինքն դրուԹեանց մէջ, որոնք համապատասխանումեն մարմնոյ գործարանների դրուԹեանց։ Հիմնական կրքերն են՝ զարմացումն, սէր, նախանձ, ցանկուԹիւն, ուրախուԹիւն և տրտմուԹիւն։ Կրքերից ամենաբարձրն է մտաւոր սէրն առ Աստուած։

4. Օկկազիօնալիզմ։ Դեկարտը ընդունելով մարմինն և հոգին երկու բոլորովին զանազան տեսակ և փոխադարձ-անկախ էուԹիւններ չէր կարող միանգամայն մերժել այն իրողուԹիւնը, որ մարմնոյ և հոգուոյ մէջ գոյուԹիւն ունի մշտական և սերտ համապատասխանուԹիւնը, այսինքն մարմնոյ դրուԹիւնից համապատասխանումեն հոգուոյ յայտնի դրուԹիւնները և, ընդհակառակն, հոգուոյ դրուԹեանց՝ մարմնոյ յայտնի դրուԹիւնները։ Մարմնոյ և հոգուոյ մասին Դեկարտի ոլորած գաղափարներից չէ կարելի նոցա բնական փոխադարձ ներգործուԹեան կարելիուԹիւնը դուրս բերել և այս պատճառաւ, այն հարցը, ԹէՀ խորհող հոգին մարմնոյ դրուԹիւններն ինչպէս կարող է ընդունել և ԹէՀ տարածեալ մարմինը հոգուոյ ցանկացածի պէս գործել՝ միմեայն կարելի է կարծել որ մի գերբնական միջամտու-

թեան շնորհիւ վճռած լինի։ Այսպիսի ենթադրութիւն է ներկայացնում օկկազիոնալիզմի ուսումը, որ առաջ է տարել Դեկարտի հետևող Հեյլինկսոմը (1625—1669)։ Հոգին, որի էութիւնը կայանում խորհրդածութեան մէջ՝ մարմնից իմ հոգուց զանազանուող նիւթաւոր առարկաների մէջ ես գտնում եմ և իմ մարմինը հոգուս հետ միացած։ Թէև մարմինս կամքի ցուցմունքներով է շարժվում, միանգամայն հոգին չէ նորա շարժողութեան պատճառը, այլ մի երրորդ պատճառ, այսինքն Աստուած, որ զանազանվում թէ հոգուց և թէ մարմնից (որովհետև Դեկարդի ուսմամբ բացի հոգևոր և մարմնաւոր նիւթերից միմիայն գոյութիւն ունի Աստուած)։ Աստուածային անմիջական միջամտութիւնը հոգին մարմնի հետ է միացնում։ Ինձ անհասկանալի կերպով Աստուած հոգին և մարմինն իրար հետ այնպէս է համաձայնեցնում, որ հոգուց ցանկութեան հետևումն մարմնոյ համապատասխան շարժումն։ Մարդու մէջ միացած երկու անկախ գոյութիւնների՝ խորհողի և տարածեալի, մշտական համաձայնութիւնն ոչ թէ բնական, այլ մի գերբնական գործ, մշտական հրաշք է։

Բայց հոգւոյ ու մարմնոյ փոխադարձ ներգործութիւնն ո՛չ թէ միայն նորանում է կայանում, որ հոգին ներգործում է մարմնի վերայ, այլ և նորանում, որ մարմինը ներգործում հոգւոյ վերայ։ Եթէ՝ մի կողմից՝ մեր կամքը մարմնոյ մէջ առաջացնում շարժողութիւններ, ուրեմն, միւս կողմից՝ մարմինը հոգւոյ մէջ զգացողութիւններ է առաջացնում, այսինքն մարմինն իմացվում հոգւով։ Այս պատճառաւ Դեկարտի միւս հետևողը՝ Մալեբրանշը (1638—1715) գլխաւորապէս զբաղուեցաւ հետևեալ հարցովս՝ եթէ հոգին և մարմինն երկու իրարից բոլորովին անկախ էութիւններն են, ուրեմն ի՞նչպէս կարելի է գիտակցութիւնը։ Հոգին ընդունակութիւն ունի զանազան մտապատկերներ ընդունելու, որոնք վերաբերվում են կամ Աստուծոյն, կամ նոյն իսկ հոգւոյն և կամ նիւթերէն աշխարհին։ Աստուած ճանաչվում անմիջապէս, ինչպէս բոլոր նիւթերի գերագոյն պատճառ։ Թէև իսկական հոգին ընդունում ենք, բայց նորա էութիւնը չենք իմանում։ Մենք արտաքին աշխարհի հետ աւելի լաւ ծանօթ ենք, որովհետև կարող ենք նորա յատկութիւնը նոյն իսկ նորա էութիւնից դուրս բերել, որ կայանում տարածութեան մէջ։ Մեր կողմից, մենք արտաքին աշխարհը ճանաչում ենք միմիայն մեր մտապատկերների միջոցով, այսինքն մեր հոգւոյ դրութեանց միջոցով։ Այս պատճառաւ էլ հարց է ծագում՝ ի՞նչպէս կարելի է, որպէս զի այս մտապատկերներն արտաքին աշխարհի էութեանը համապատասխան լինեին։ Նորա չեն կարող հոգւոյ վերայ արտաքին առարկաների ներգործութեամբ առաջանալ, որովհետև հոգւոյ վերայ առարկայի ներգործութիւնն անկարելի է։ Միւս կողմից, Մալեբրանշը չէ ընդունում ընդարձակ մտապատկերները. որովհետև բանականութեան բոլոր մտապատկերներն անմերձ են և այս պատճառաւ էլ ինքն իրանց երևիլ չեն կարող վախճան ունեցող գոյացութեան մէջ։ Այս պատճառաւ նորա (մտապատկերները) ստեղծվում Աստուածանից,

այսինքն արտաքին աշխարհումը կատարված անցքերի առթիւ Աստուած մեր մէջ նոցա համապատասխան մտապատկերներ է յարուցանում։ Մեր բոլոր իմացութեան գլխաւոր և անմիջական պատճառն Աստուած է։

5. Սպինոզայի հոգեբանութիւնը։ Օկկազիոնալիզմը կնստահիմ Դեկարդի այն ուսման հետ հետևողաբար եղրակացութիւնն է, թէ մարմինն ու հոգին զանազան գոյացութիւններն են, միմիայն միացած և ոչ թէ կապած մարդոյ մէջ։ Բայց միևնոյն ժամանակ, այս եղրակացութիւնը հերքում է մարմնոյ և հոգւոյ փոխադարձ ներգործութեան մասին եղած ամեն տեսակ գիտնական բացատրութիւնը։ Այսպիսի դժուարութիւնից դուրս գալը կարելի է միմիայն ենթադրելով, որ հոգին ու մարմինը — որ է խորհրդածութիւնն և տարածութիւնը՝ երկու զանազան գոյացութիւններ չեն, այլ միևնոյն էութեան միմիայն յատկութիւնները։ Այս սկզբունքը մշակած է Սպինոզայի (1632—1677) ուսման մէջ։ Սպինոզան Դեկարդի հետ նորանում է համաձայն, որ նա էլ ասում՝ հոգւոյ բնութիւնը կայանում է խորհրդածութեան մէջ, իսկ մարմնոյնը տարածութեան մէջ։ բայց միմիայն թէ հոգին և թէ մարմինն ա՛չ թէ գոյացութիւններ է համարում, այլ յատկութիւններ։ Գոյութիւնը մէկ է և այս գոյութեան մէջ մեզ երկու յատկութիւններ, խորհրդածութիւն և տարածութիւն՝ յայտնի են։ Որովհետև գոյութիւնը մի է, ուրեմն այսպիսի գոյութիւնը մարդս չէ կարող լինել, ինչպես և միւս բոլոր մասնաւոր առարկաները, մարդս միմիայն մի գերագոյն էակի երևոյթ է (մարդուս)։ Այսպէս Սպինոզան պրոշում է գոյութիւն (Աստուած), նորա յատկութիւնները (խորհրդածութիւն և տարածութիւն) և նորա երևոյթներ (մասնաւոր գոյացութիւններ իրթիւս որոց մարդս է)։

Աստուած մի անվախճան գոյութիւն է, բացի նորանից ուրիշը չըկայ, ուրիշ խօսքով՝ բոլոր գոյացածներն Աստուծոյ մէջ գոյութիւն ունին և կարելի է նորա միջոցով նոցա հասկանալ։ Աստուած, ինչպես անվախճան գոյութիւն՝ ունի և անվախճան անթիւ յատկութիւններ, բայց այս յատկութիւններից մեզ միմիայն յայտնի են երկուսը՝ խորհրդածութիւնն ու տարածութիւնը։ Թէև մի գոյութեան մէջ այս երկու յատկութիւնները միացած են, միանգամայն բոլորովին զանազան տեսակ են։ Նոցանից ամեն մինն միմեանց հասկանալու համար իրար պէտք չունին։ Նոցանից ամեն մինը հերքում է միւսը, այնպէս որ ոչ խորհրդածութիւնը տարածութեամբ և ոչ էլ տարածութիւնը խորհրդածութեամբ բացատրած չէ կարող լինել։ Նիւթը զրկուած է մտքից, իսկ հոգին խորհրդածութիւնը՝ զրկուած է երկայնութիւնից, լայնութիւնից, հաստութիւնից, ձևից։ Նոցա այս զանազան տեսակութեան պատճառաւ ոչ հոգին կարող է մարմնոյ վերայ ներգործել և ոչ մարմինը հոգւոյ վերայ, այլ նոքա միասին մեծացած են միմիայն մի ընդհանուր պատճառի մէջ, այսինքն Աստուծոյ մէջ։ Աստուած իւր բոլոր յատկութիւնների գերագոյն միութիւն է, ուրեմն և խորհրդածութեան և տա-

բածութեան դերագոյն միութիւն է։ Բայց երևութի մէջ այսինքն մարդոյ մէջ այդ յատկութիւններն առանձնացած են և փոխադարձ անկախ։ Բայց որովհետև նոքա միմիայն (յատկութիւնները) մի գոյութեան երկու կողմն են ուրեմն և հասկանալի է նոցա մշտական կապն ու համապատասխանութիւնը։ Բնութեան մէջ չկայ խորհրդածութիւնն առանց տարածութեան և տարածութիւնն առանց խորհրդածութեան այսինքն չկան ոչ անմարմին հոգիներ և ոչ էլ անշունչ մարմիններ։ Մարդկերների կարգը բոլորովին նման է նիւթերի կարգին, այսինքն մարմինների շարժմունքներն և հոգւոյ մտքերը գտանվումեն յարատև համաձայնութեան մէջ, ոչ թէ աստուածային միջամտութեան պատճառաւ, այլ աստուածային գոյութեան մէջը նոցա հիմնական միութեան պատճառաւ։ Մեր հոգեկան աշխարհի ամեն մի փոփոխութիւնը, ուրեմն, համապատասխան է մարմնային աշխարհի փոփոխութեանն և ընդհակառակն է լինում, այսինքն մեր կամքի դրութիւնները մի և նոյն ժամանակ մեր մարմնոյ մէջ իրանց համապատասխան շարժողութիւններ են առաջացնում, իսկ մարմնոյ դրութիւններին ուղեկցումն նոցա համապատասխան հոգեկան մտապատկերները։ Ա յսպէս, Սպինոզայի ուսումը մի բանալի է տալիս այն հարցը պարզաբանելու համար որ Դեկարդի և Օկկազիոնալիզմի համար անհասկանալի էր մնում։ Սպինոզան բացատրում է թէ ինչպես կարելի է գործողութիւնը այսինքն հոգւոյ տեսանելի ազդեցութիւնը գործի վերայ և ինչպես կարելի է գիտակցութիւնը այսինքն մարմնոյ տեսանելի ազդեցութիւնը հոգւոյ վերայ։

Ա՛ն այս միմիայն մի հարց պարզ չէ մնում, խօսքս առանձին մարմինների և հոգիների գոյութեան մասին է, որոնք մի և անվախճան գոյութեան երևոյթներն են։ Սպինոզայի ուսումն այս հարցին ոչինչ համապատասխան չէ տալիս։ Անվախճան տարածեալ և խորհող գոյութեան մասին չենթադրութիւնից չէ երևում, որ անթիւ տարածեալ և խորհող անհատները գոյութիւն ունենան։ Ընդհակառակն, որովհետև Սպինոզայի ուսման հիման վերայ միմիայն կայ մի անվախճան և ամենազօրավանդակ գոյութիւն, ուրեմն ներանից և իրարից զանազանող վախճանական, սահմանափակ գոյացութիւնների կեցութիւնը բոլորովին անհասկանալի է դառնում։

Սպինոզան գիտակցութեան մէջ որոշում երեք աստիճան՝ մանաւանդ մտապատկերների գոյութիւնը (երևակայելն), ընդհանուր մտապատկերների գոյութիւնը (բանականութիւն) և անմիջական Աստուծոյ գիտակցութիւնը (միտք)։ Կամքի ազատութիւնը իբրև կամաւոր ընտրութեան ընդունակութիւն գոյութիւն ունենալ չէ կարող, որովհետև ամեն մի գործողութիւն անպատճառ իր պատճառից է բղխում։ Աստիճանման կամ նուաղման կիրքերը հոգւոյ խոհական գործունէութեան դրութիւններն են, որոնք մարմնոյ նոյնատեսակ գործունէութեան աստիճանումը կամ նուազումը համապատասխանումեն։ Խոհական ուժի նուազումն արատութիւն է, իսկ նորա աստիճանաչն՝ առաքինութիւն։ Սպինոզան այս երկու կիրքերից հե-

տևացնում ուրիշ կիրքերը (հոգեկան զրուժիւնները)՝ սէր, նախանձ, երկիւղ եւն։ Սաստկացող հոգւոյ կիրքերը հոգւոյ գործունէութիւններն են, իսկ նուազողները՝ նորա տանջանքները կամ կիրքերը։ Ամենաբարձր հոգեկան զրուժիւնն է մտաւոր սէր առ Աստուած։ Սպինոզան անձնական անմահութեան մասին բաւական անորոշ կերպով է խօսում, և իւր ուսման ընդհանուր մտքի հետ կապ էլ չունի դա։

(Շարունակելի) Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց։

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԲԷՆ

ՊՐՕՖԷՍՈՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԷՔՒՐՏԻՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

(Շարունակ. Աբրպա. Ը. թ.)

Մեր գիտութեան վերայ հիմնուելով՝ հիւլէական ուժոյ մասին վստահութեամբ կասեմք, որ հիւլէական փոփոխութիւնն՝ ջղոց և ջղային կեդրոնաց մէջ՝ կկատարէ փոփոխութիւն ջղային նիւթոց, որ կհասնի շուտով իւր սահմանագծին և կանէ ջիղն անընդունակ յետագայ փոփոխութեան, մինչև որ հանդիստ և նմանեցուցումն (ассимиляція) չեն վերականգնեցնել նախկին դրութիւնն։ Մեր ճանաչողական փորձն կներկայացնէ մեզ լիակատար զուգընթացութիւն այդ գործողութեան, ամենատեսակ տպաւորութիւն կամ հոգեկան շարժումն կլինի ըստ ամենայնի արագապէս նորա ծագման վայրկենաժամին, անցնելով ժամանակ՝ հետզհետէ կթուլանայ և ի վերջոյ այնպէս «կմաշուի» որ ապագայ գրգռումներն չեն կատարել այլ եւս ոչինչ գործողութիւն։ Կարծեցեալ բացառութիւնք և տատանմունքն, միմիայն կապացուցանեն կանոնն։ Իւրաքանչիւր զգացողութեան ժամանակն երկարատև նախընթաց անգործունէութիւնն համապատասխանող ջղերի՝ կպազմէ նոցա զգացողութեան անհրաժեշտ պայմանն։

Արտաքին բնազդումներն գործադրելու ժամանակն, ինչպէս ջերմութիւն և սնունդն, զգացողութիւնն կաճի ի միասին գրգռման հետ, մինչև ցայն կէտն, երբ բնազդումն կփոխէ իւր բնաւորութիւնն՝ այնպէս որ առաւել բարձր բարեխառնութիւնն կքակտէ ոսկորն և չափազանց քանակութիւնն կերակրոց կգժուարացնէ մարսողութիւնն։ Կայ (թէև մեք կգժուարանամք թուել) պէտպսպական հաւասարակշիռ (чувствительный эквивалентъ) ջերմութեան, սննդեան, մկանունքի գործունէութեան, ձայնի, լուսոյ։ Կայ որոշեալ փոփոխութիւն զգացողութեան, միակերպ աճեցումն բաւականութեան կամ անբաւականութեան, համապատասխանող բարեխառնութեան

10, 20 կամ 30 աստիճանի։ Սապէս յամենայն հանգամանագէպս կայ զգացողական հաւասարակշիռ օղւոյ, անուշահոտ իւղոց, երաժշտութեան ևլն։

Մարդոյ որոշեալ կապն՝ որ ունի արտաքին աշխեցութեանց և զգացմանց հետ կթոյլատրէ մեզ դատել մարդկային չահուց համար՝ միմիայն մեզ մատչելի առարկական կողմանէ։ Մեք չեմք կարող տեսանել զգացումն մեր մերձաւորներին, միմիայն կեզրակացնեմք, որ միակերպ աշխեցութիւնքն կանեն ամենից վերայ համարեա և միակերպ ներգործութիւն։

Այսպէս մեք կարող եմք չափել երջանկութիւնն որևիցէ ծանօթ մարդոյ քանի մի առարկաներով, զոր օրինակ դրամով, իբաց առնելով վիշտ և թշուառութիւններ և աշխարհային այլ գործոց ստոր պատճառներն։ Եթէ սոյն որոշումն միշտ կլինի որքան և իցէ անճիշտ, այդ կկախի ոչ թէ անորոշողութենէ զգացողական հաւասարակշռութեան, այլ մարդկային գործարանաց բարդութենէ, նա մանաւանդ այն բանէն որոյ սահմանն՝ որ իւրաքանչիւր գրգռման ժամանակին կրաժանէ նորա օգտակար ձգտումներն վնասակարներից, չափազանց անձուկ է։

Ամենահասարակ ասացուածն, որ մեք կվերաբերեմք հոգեկան դրութեան՝ է ընդհարումն (shock) բան՝ որ միակերպ կփոխաբերի մարդոյ հոգեկան և մարմնական կոչմանն։ Ճանկարծակի գրգռումն ականջաց, աչաց, կաշոյ ընդոց, կանուանի ընդհարումն բնական ժողք, բայց մեք կարող եմք անուանել զայն նոյնպէս հոգեկան ընդհարումն, իբրև սրընթաց անցումն հանգստութենէ դէպի գրգռումն. հոգեկան և նիւթաւոր երևոյթներն միւսոյ մէջ զանազան են միմեանցից, բայց այդ հանգամանաց մէջ կատարելապէս զուգընթացք են միմեանց։

Մեր զգայական ընդունակութեան առանձին ձևերն կցուցանեն մեզ շատ հետաքրքիր համանմանութիւններ բնական և հոգեկան բնութեան։ Ես կընտրեմ նոցանից առաւել նշանաւորն։ Նախ՝ դարձնեմք ուշադրութիւն հիւանդութեան սովորական դիպուածոց վերայ, որոյ մէջ հոգեկան հիւանդութեան նշաններն կերևին իբրև սովորական արբանեակներ մարմնական խանգարման։ Կան այնպիսի ոստայնք կամ հիւսուածք, որք ջղերի սակաւութեան պատճառաւ՝ շատ դիւրագաց չեն, զոր օրինակ ոսկորներն, եղունգներն, մազերն։ Զգայականութեան մէջ կայ աստիճան՝ համեմատ կապակցութեան ներկայ ոստայնին ուղեղի հետ։ Իւրաքանչիւր հիւանդութեան մէջ՝ որ ուղղակի կամ անուղղակի կազդէ ուղեղին, բժիշկն կորոնէ յայտնի համապատասխանող հոգեկան նշաններ։ Դրութիւնն հոգւոյ կցայտնուի դրութեամբ ուղեղի։ Իբրև օրինակ կարելի է յառաջ բերել հոգեկան նշաններն տենդի հիւանդութեան այսպիսի նախադասութեամբ «(ջերմախտական ճնշումն հոգւոյ»։ Հիւանդի մէջ կնկատուի չափազանց անընդունակութիւն մտաւորական կամ մեքենայական զօրութեանց։ Արտայայտութիւնն դէմքի՝ որն է ըլճամիտ, գանդաղ, ցրուեալ, անմիտ. այդ տկարն նման է այն մարդոյն, որ ըլճամտացել է արբեցութիւնից ևլն։ Փորձառու

Տմուտ բժիշկն կենթադրէ որ Հոգեկան ամենայն փոփոխութեան կհամապատասխանէ բնական փոփոխութիւնն և սոյն մտօք կարծես թէ նա նիւթապաշտ է։

Փիզիքական և Հոգեկան բնութեան մէջ կայ այլ ևս մի հետաքրքրական համապատասխանութիւն որն կկոչանայ բոլոր զգայարանաց սուր և ծանրային զգացութիւնների տարբերութեան մէջ։ Խայտուռէն մատին կամ վառած ածուխն կպատճառեն սուր և ազդու զգացողութիւն. Հանդերձի կպչելն մեր ամբողջ մարմնոյն կամ ջերմ աւազանն կպատճառեն ծանրային կամ ընդհանուր զգացողութիւն։ Նկատուած է, որ սուր զգացողութիւնն կառաջանայ սաստիկ դրդռմունքից նեղ տարածութեան, բայց կոչ ծանրային զգացողութիւնն՝ առաւել թոյլ գրգռմունքից մեծ տարածութեան։ Այդ զանազանութիւնն վերաբերելի է իւրաքանչիւր գործարանի զգացման։ Բոցն գազի կտոյ սուր զգացողութիւն, բայց սփռեալ լոյսն արեգական՝ կտոյ ծանրային զգացողութիւն։ Սրնդաձև նուագարանի բարձր ձայնանիշն կպատճառէ սուր և ազդու զգացողութիւն, իսկ ցած բամբասձայն խաղն ջութակի կամ երգեհոնի կպատճառէ ծանրային զգացողութիւն։ Տպաւորութիւնքն՝ որք կպատճառեն ծուխն, որոտմունքն, աղաղակն բաղմութեան են ծանրային, որովհետև կկրկնուին լայնատարածութեան մէջ։ Ճաշակելեաց զգացողութիւնն սուր է։ Զգացողութիւն մարսողութեան ծանրային է։ Սակայս մեր Հոգեկան դրութեան նշանաւոր տարբերութենց մին կորոշուի մեր արտաքին գործիչների ներգործութեան եղանակաւն։

ԳԼՈՒԽ Դ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԼՆՈՒԹԱՆ ԱՒԵՐԶԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՑ ԵՒ ՄԱՐՄՆՈՑ.

Մեր յետագայ խնդիրն կկայանայ այն բանի մէջ, որ որքան կարելի է տալ համառօտ նկարագիր առաւելապէս առընչակցութեան ընդհանուր օրինաց մասին որ կայ Հոգւոյ և մարմնոյ մէջ։ Այդ առարկայն չափազանց դժուարին է և տակաւին կատարելապէս չէ մշակուած։ Այսու ամենայնիւ մեք գիտեմք այնքան, որ կբաւականացնեմք հետաքրքրութիւնն և զայն ուսումնասիրելուց կքաղեմք օգտակար ցուցմունքներ։

Մեք արդէն տեսանք, որ կան մտածելոյ պատճառներ թէ Հոգեկան իւրաքանչիւր փոխանցման համար պէտք է լինել իբրև արբանեակ նորան ջղային ընդհարումն և թէ աստիճանք նոցա ուժգնութեանցն կհամապատասխանեն միմեանց։ Այդ է ընդհանուր հանդամանքն, զորս մեք կարող եմք ցուցանել քննելով առընչակցութիւնները։ Թէպէտև այդպիսեաւ կսահմանափրի շատ նշանաւոր կէտն սակայն՝ այդ տակաւին անորոշ է, որ բաւականացնէ մեզ։

Այժմ գրեթէ ընդունուած է, որ Հոգին ունի երեք տարբեր գործողութիւն, ղօ. զգացմունք (նաև յուզմունքն) կամք և մտածողութիւն կամ բանականութիւն։ Այդ երեք կողմունքն միայն Հոգւոյ թէպէտ և ունին յատկանիշ տարբերութիւն իւրեանց մէջ այսու ամենայնիւ այնպէս

անձուկ կապուած են միմեանց հետ որ նոցանից ոչ մին կարող է գոյութիւն ունենալ առանձինն. զօ. կամքն կամ բանականութիւնն առանց ղգացման՝ բայց ղգացումն՝ իւր կատարեալ արտայայտութեան մէջ կպարունակէ արդէն առաջին երկուքի սկիզբն կամ սաղմն (зародышъ):

Սմին իրի, թէև հոգւոյ գործունէութեան՝ մարմնական արբանեակների վերաբերութեամբ՝ մեր արած նկարագրութեան մէջ, այս երկոք զօրութիւնները քննելու եմք առանձնապէս. սակայն՝ կյուսամք գտնել մի քանի ընդհանուր օրէնքներ, որք կվերաբերին ամբողջութեանն.

ՁԳԱՑՄՈՒՆՔ.

Մեք բոլորեքեանքս գիտեմք թէ ի՞նչ է բաւականութիւնն և անբաւականութիւնն և ծանօթ եմք գրգռման դրութեանցն, որն չէզոք է կամ անտարբեր. Ձգացումն՝ հակառակ մտածողութեան և կամաց, առաւել ևս որոշապէս կերևի բաւականութեան և անբաւականութեան ժամանակն՝ ոչ մին՝ ոչ միւսն բնաւ երբէք կարելի է խառնել մտածողութեան հետ, թէև նոքա կլինին գլխաւոր հիմն կամաց, բայց ոչ կազմեն էութիւն իրին. Պատահին շատ դէպքեր թէև մեք կգրգռիմք կամ կճանաչեմք ինչ և իցէ մի բան, բայց չզգալով ոչ բաւականութիւն և ոչ անբաւականութիւն, անգամ չմտածելով և չցանկալով որոշակի մի բան. Այդպէս է, զօ. զարմացումն և այդպէս են գրգռմունքն, որք կլինին շատ անգամ մեր հաճոյ կամ անհաճոյ տրամադրութեան դադարման ժամանակին. Ցետ այնորիկ երբ երկիւղի անհաճոյ ղգացումն կընդհատուի կմնայ այլ ևս չելզոք քանի մի գրգռումն. ԵՒան օրէնքներ՝ որք առհասարակ բոլոր ղգացմանց համար, և այլ օրէնք, որք կվերաբերին միմիայն բաւականութեան կամ անբաւականութեան.

Ցետ անորոշ դրութեան, որն կրնացայտէ, ամենայն հոգևական գործողութեան հետ կլինի և մարմնականն, ամենից առաջ կան օրէնք, որք ընական նմանութիւն կկազմեն ամենահիմնական և ընդհանուր ստորոգելեաց հոգւոյ (ճանաչողութեան), որք առհասարակ կկազմեն օրէնք վերաբերութեան.

ՕՐԼՆԵՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ.

(Յարմարելի ընդ ղգացմանց և ընդ մտածողութեան)

Ճանաչողութեան ամենաանհրաժեշտ պայմանն է փոփոխականութիւնն ղգացողութեան.

Նախ՝ հոգևոր կողմանէ.

Ամենեցուն յայտնի է, որ անփոփոխական գործողութիւնն որ և իցէ մեր ղգացմանց, ի դէպս երկարատև շարունակութեան, ունի նոյնգունակ ազդեցութիւն, ինչպէս թէ երբէք նա եղած չէր. Մեք մեծնոլորտի ճնշումն չենք ընդունիլ. Հաւասարաչափ բարեխառնութիւն՝ որից կօդտին ձկներն արևադարձի փոխաբերական ջրոց մէջ, կմոռու հոգւոյ մէջ բաց տեղ (пробѣлъ)

որ կվերաբերի ջերմութեան և ցրտոյ։ Զգացողութիւնն ջերմութեան չէ բացարձակ, անկախ, ինքնապաշտպան դրութիւն հոգւոյ, բայց միայն հետեւանք փոխանցման ցրտութենէ։ Զգացողութիւն լուսոյ կենթադրի փոխանցումն մեայլ աղբամուղբից կամ ստուերից կամ սակաւ աստիճան լուսաւորութենէ դէպի մեծն։ Ճառաջ բերելմբ սովորական օրինակներ, ժամադործն չնկատել անընդհատական կնտնտոցն իւր բոլոր ժամացոյցների, բայց եթէ բոլորն յանկարծ կանգնէին և դադարէին։ նա իսկոյն կնկատէր իւր ճանաչողութեան մէջ մի բանի պակասութիւն։

Մենք շատ զարմացած կլինէինք, եթէ Այգպիսի ընդհանուր օրէնքն ոչ մի ժամանակ նկատուած չլինէր գրականութեան մէջ։ Այն շատ անգամ յայտնուած է եղել փոքր ի շատէ որոշեալ ձեւով։ Մին՝ առաւել որոշեալ արտայայտութիւնից այդ օրինաց տուել է Գաբրեան։ «Մարդոյ համար (նա պարտաւոր էր ասել Բոլբովէն) միւնոյն է, ճիշտ ճանաչել, միւնոյն է իսպառ ոչինչ չճանաչել։

Փոխադրելն այդ դրութիւն գրգռման՝ ևս առաւել պարզ և մեկին կճանաչուէր։ Ամենեցուն յայտնի է, որ առաջին վայրկեան փոխադրութեան հիւանդութիւնից՝ դէպի առողջութիւն, աղքատութիւնից՝ դէպի ճոխութիւն, տգիտութիւնից՝ դէպի գիտութիւն կպատճառեն ևս առաւել ուժգին զգացողութիւնք, որ և որչափ որ յիշողութիւնն նախկին դրութեան կթուլանայ այնչափ և բաւականութեան աշխոյժն կպակասի, որն ունէր իւր նոր դրութեամբն։ Շեկսպիրն կնոսի ժլատի համար, որ հաշիւ երբէք կնայի իւր գանձատան վերայ երկիւղ կրելով՝ որ կլեցնէ նուրբ, սուր և հաղուագիւտ բաւականութիւնն և կհարկադրէ թեթեւամիտ արքայաղն Հենրեխին ասել If all the year were playing holidays To sport would be as tedious asto work.

Եթէ տմբողջ տարին բաղկանայր տօնախմբութիւններից, ուրեմն ուրախութիւնն ևս այնքան կձանձրացնէր՝ որքան ծառայական աշխատութիւնն։

Պարապոյ ժամերն, առանձնութիւնն և հանգիստն հաճոյ են՝ միմիայն ըստ հակադրութեան նախընթաց աշխատութեան և դրդման։ Մշտապահանջումն նորութեան, մշտապէս բազմապատկելն գիտութեան և հարստութեան, բարւոքելն մեր կենաց պայմանների — կվկայեն վերաբերութեան օրինաց գոյութեան և ուժոյ մասին առ ամենայն բան, ինչ որ կվերաբերի բաւականութեան։ Այդ օրէնքն կհաստատէ հարստութեան արտօնութիւնների քանի մի մասն, բայց անձեռնամխելի կթողու միւս մասն. զօ. ծառայն պէսպէսութիւնն և փոփոխութիւնն բաւականութեանց։

Իմ այս խնդիրն չկայանայ այն բանի մէջ, որպէս զի ցուցանել թէ վերաբերութեան օրէնքն ի՞նչպէս կերևին բոլոր գեղարուեստից մէջ հակադրութեան անուամբ. ի՞նչպէս նա կպայմանաւորէ այն ինչ՝ որ ամենատեսակ գիտութեան ու իմացականութեան մէջ իւրաքանչիւր իրական հաստատութեան կամ դրութեան կհամապատասխանէ և նոյնպէս իրական հակադրութիւն։ զօ. ուղիղ—խոտոր և շարժուն—հանգիստ, ոգի—նր-

կարաձիգ նիւթի կամ երկարաձիգ տարածութիւն. միով բանիւ իմացականութիւնն ընաւին չէրնել եզական, այլ միշտ երկակի կամ երկկողմանի. թէև ոչ մի ժամանակ երկու կողմունքն արտայայտուած են։ Ինձ այս տեղ պէտք է բաւականանալ սոյն չափազանց համառօտ բացատրութեամբն իսկական դրութեան, և վերադառնալ դէպի նորան համապատասխանող բնական փաստերն։

Երկրորդ՝ ընական կողմանէ։

Այս տեղ գլխաւոր խնդիրն է հասկանալ թէ ի՞նչ նիւթական պայմաններից կ՚յառաջանայ այն, որ ընդհակառակ շարունակեալ գործողութիւնն կը դադարի կատարել այն քանակութիւնն և այն տեսակ ջղային գործունէութիւնն որպիսին կպահանջի ճանաչողութեան համար։

Միակ երևոյթն ջղային գործունէութեան արդէն յիշուած է։ Ջղային նրբաթելերն և վանդակներն ընդ աղդեցութեամբ գրգռման կենդանիկին մեքենական փոփոխութեանց, որոց պատճառաւ՝ նոցա ուժերն աստիճանաբար կնուազին, չետ որոյ նոքա կկարօտին անդորրութեան և հանգստեան։ Առաջին վայրկենաժամերի մէջ գրգռումն միշտ կլինի առաւել կենդանի և արագ կղարթուցանէ ճանաչողութիւն ամենայն բանի առաւել ուժեղ կերպիւ։ Այդ պայմանն՝ ամենից աւելի կպահանջի համակրական և զգացողական դրութեան պաշտպանութեան համար (sensibility)։ Ջղային համակարգութիւնն կպահանջէ զօրանալ և ամրապնդիլ սննդով և հանգստութիւնով. բնաւ երբէք պէտք չէ հասցնել ցվերջին աստիճան նուազման որ և իցէ դէպս։ Մի և նոյն ժամանակ կ՚յարմարի մեր ներգործական գործողութեան թէ բանականութեան և թէ կամաց և զգացմանց շրջաններին։ Նոցա ոյժն կհասնի ցգագաթնակէտն այն ժամանակ, երբ նորոգեալ ջղերն թարմ ուժով կբմբռնեն առարկայն և կթուլանան երբ սոքա կսկսին նուազիլ։ Կան այնպիսի երևոյթներ, որք կկազմեն բացառութիւններ։ Այդ կցուցանէ զօսովորական ոճն թէ պէտք է «տաքանալ» (growing warm) իւր աշխատութեան վերայ, այսինքն ամենամեծ եռանդն կժամանէ սովորաբար գործն սկսելուց փոքր ինչ յետոյ, այդ կբացատրի պարզապէս արեան սաստիկ հոսմունքովն, որ կ՚յառաջանայ ծանր աշխատութիւնից։

Այդ փաստն շատ նշանաւոր է գործնական կողմից՝ և կհամապատասխանէ մեր քանի մի տեղեկութեանցն վերբերական օրինաց մասին կամ տպաւորութեանց փոփոխութեան մասին։ Բայց լիովին նշանակութիւնն այդ օրինաց տակաւին կատարեալպէս բացատրուած չէ։ Մեզ կմնայ բացատրել այլ ևս երկու հանգամանքներ։

Խնդապէս որոշեալ յատկութիւնն օրինաց վերբերութեան է կախումն ճանաչողութեան ուժգնութեան այն տարբերութիւնից, որ կայ երկու տպաւորութեանց մէջն. զօ. անցանելն մի բարեխառնութիւնից դէպի միւսն։ Երկուց դրութեանց մէջ եղած տարբերութիւնից կկախի ջղերի փոփոխութեան առտիճանն, սակայն փոյթ չէ թէ՝ կլինի գրգռումն ջղերի իւրեանց անգործ դրութիւնից և կամ թէ փոփոխումն գործունէութեան նախ-

կին եղանակի, որում՝ ջղային համակարդութիւնն արդէն կարողացել է յարմարիլ։

Կարող են լինել երկու կերպ հայեցողութիւնք. անզգայութեան ընական պայմանի մասին, որք հակադիրք են հոգեկան առոյգութեան։ Կամ՝ ջղային բազմութիւնն՝ իբրև մի ամբողջ բան կպտնուի հանգստեան մէջ, որում՝ մերձաւորապէս կարելի է նմանացնել խորին քունն կամ նորա մէջն թէև կլինին շարժմունք, սակայն նոցա ընթացքն հաւասարաչափ են և մշտական։ Իբրև ի պաշտպանութիւն մեր այդ երկու հայեցողութեանց յառաջ կբերեմք փաստեր և համեմատութիւններ։ Այդ երկու հայեցողութեանց ընտրութիւնից կկախի այն՝ թէ ո՞րն կընդունիմք իբրև վերջնական պայման իւրաքանչիւր ճանաչողութեանց։

Իսկ ինչ որ կվերաբերի առաջին հայեցողութեան՝ այն առաւել ընական է, որ ջղերն կատարեալ հանգստութիւնից կփոխուին դէպի շատ կամ սակաւ գործունէութիւն կամ գրգռումն, համեմատ նոցա զգացած գրգռման, և մեք այսպէս կհասնեմք ճանաչողութեան, ընդհակառակն՝ ընդհատումն գրգռման և նուազման ջղերի նորից կտանի դէպի հանգիստն և անզգայութիւնն։ Եթէ չլինէին փաստեր, որք պահանջեն այլ բացատրութիւն, իրաւունք կունենամք ընդունել այդ հայեցողութիւնն իբրև առաւել համապատասխանող բոլոր համեմատութեանց։ Բայց կան փաստեր, որք կցուցանեն մեզ այլ ճանապարհ։ Ջղային համակարգութիւնն դուն ուրեք կընկնի կատարեալ անգործունէութեան մէջ։ Ամենախորին քնոյ մէջ անդրացուլական գործողութիւնքն կշարունակին։ Այսու ամենայնիւ մեք կդնեմք նոցա մի կողմն, ըստ որում նորա չեն պատճառ ճանաչողութեան։ Բայց երբ մեք արթուն ժամանակներս միտքը ի շատէ կգործեմք և մեր զգացմունքն կենթարկին գրգռմանց, շատ անգամ չեմք ճանաչել ո՛չ մեր գործունէութիւնն և ո՛չ մեր զգայական առընկալութիւնն, եթէ նորա անգամ այդ բոլոր ժամանակն կմնան անփոփոխ և միակերպ։ Առաւել ճշմարտանման բացատրութիւն այդ սովորական փորձոյն կթուէր այն՝ որ միշտ կան յորձանք ջղային ուժոյ, բայց և ճանաչողութիւնն կընդհատի եթէ ուժգնութիւնն չփոփոխի։ Շատերն այդ հանրածանօթ փաստերի կխօսին յօգուտ այդ հայեցողութեան, այսպէս, ամենայն դրութեան մէջ կայ յայտնի ստոր աստիճան ջղային գործունէութեան այնպէս որ, ձգտումն միանանց չընդհատիլ անգամ ամենախորին քնոյ ժամանակն։

(Թարգմ.) Ս. Ե. Մ.

(Շարունակելի)

ԱՄՊԻ *).

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ

Ո՞վ ամպիկք օդապար, ուղևորք անդադար,
Որք ի դաշտ կապուտակ՝ մարգարտով շարայար,
Սըլանալք և սահիք՝ ինձ հանգոյն նըժդեհիկք
Ի քաղցրիկ հիւսիսոյ ի հարաւ սըրաւար։

Ըզձիզ ո՞վ հալածէ, արդեօք բաղդն ապառուժ՝
Թէ նախանձըն դաղտնի, կամ յայտնի չարութիւն,
Կամ՝ խըղճի՞ ծանրութիւն յանցանաց արդասիք,
Թէ եղբարց զըրպարտող թունալիցըն լեզուն։

Ո՛չ, այլ դուք յարտորայս ապարդիւնս ձանձրանայք...
Ախտք հեռի են ի ձէնջ, հեռի կերք չարչարանք.
Զով էք դուք հանապազ, և աղատք հանապազ,
Հայրենիք ոչ գոն ձեզ, ոչ գոն ձեզ աքսորանք։

(*) Լերմոնտովի սոյն ստանաւորը Չանգուեցեալ Գաբրիէլ Պրքեանէն Մայ վաղեմանը Թարգմանեալ է 1871 Յունիսի 16-ին հրատարակուժինք ինդըեւ-լով որ եթէ սոյնպիսի գրաւոր նշխարներ կան ևս եւս իցէ մօտ, ուղարկեն խմբագրութեանս ի հրատարակութիւն։

ՏԱՆՋԱՆՔ.

—

Քանի որ ես ինձ չէի հասկացել
Դեռ մանուկ էի ուրախ ու զուարթ
Տան ընտանիքի գարտ ու հոգս քաշել
Վառ աշխույժ էի, դէմքս կարմիր վարդ։

Պատռուած շորեր իմ բոկոտն լինել
Հէչ արգելք չէին իմ ուրախութեան.
Վազվզոումէի խաղում զուարճանում
Նոյն աշխուժութեամբ տուն վերադառնում։

Փորս կուշտ լինէր, թէկուզ չոր հացով
Դրա համար էլ ես չէի մտածում
Հարստի որդուց պաճուճանքներով
Ես, երբէք, երբէք չէի հրապուրվում։

Չէի էլ մտածում թէ հայրս ինչո՞վ
Մեր ընտանիքի կարիքը հոգում
Որ ամբողջ տարին դառն աշխատանքով
Պահել իւր տունը հազիւ կարենում։

Տարիքս հասան, չափահաս դարձայ,
Ընտանիքի հոգսն, ինչ էր՝ հասկացայ.
Անցան մանկութեան ուրախ, զուարթ օրեր
Ծանրացան կրծքիս տան դարտն ու հոգսեր։

Հայրս ուժից ընկած, Մայրս պառաւած,
Փոքր երեխանցով ես շրջապատուած,
Տանջվումեմ, տանջվում ամբողջ ամիսներ
Չեմ կարողանում ծէր ծէրի հասցնել։

Քսան հինգ տարեկան առոյգ հասակում
Ճնշուած բեռի տակ, դառն քրտինք թափում,
Օրէցօր ուժս սպառվում թուլանում,
Ապրուստի մի դուռ դռնել չեմ կարում։

Ծնուեցի թշուառ ու մոայ աշխարհ
Նոյն թշուառութեամբ կերթամ գերեզման
Ճիշգ հանգստութիւն, այն տեղ է միայն
Ա՛յն տեղ չի տանջիլ անգութ պարտապան։

ՍԷԹ.

ԱՋԳԱՅԻՆ

Անցեալ Սեպտեմբեր ամնատեսրակում տեղի անձկութեան պատճառով չը կարողացանք խօսել ազգային ինչ ինչ կարևոր պիտոյ մասին։ Այդ դէպքերն էին նախ, Երուսաղէմայ Հայոց Պատրիարք Հանգուցեալ ի Տէր Եսայի Արքեպիսկոպոսի մահը, որի մահագոյժ հեռագիրը ստանալուց յետոյ Ս. Խաչի Վերացման կիրակէ օրը ս. պատարագից յետոյ Հանգստեան պաշտօն կատարուեց մայր Աթոռումս։ Ազգը ի դէմն Հանգուցեալ Եսայի պատրիարքի՝ զրկուեց նշանաւոր և եկեղեցու նախանձախնդիր մի պատկառելի հոգևորականից՝ որ անմխիթար գերեզման մտաւ ճնշուած այն ահագին պարագի տակ, որի համար աւելի քան երկու տարի գեգերուեց Կ. Պօլսում, յուսալով մի ելք գտնել։

Բացի այն կորստից, որ ազգը ունեցաւ ի դէմն Հանգուցեալ Եսայի պատրիարքի, զրկուելով, ինչպէս ասացինք, եկեղեցու մի նախանձախնդիր պաշտօնէից, մի նշանաւոր աթոռ և այ, որպիսին է Երուսաղէմայ Հայոց պատրիարքական աթոռը, թափուր մնաց. և այս վիճակը տարաւոր դրութեամբ պիտի տևէ մինչև որ Երուսաղէմայ միաբանութիւնը ըստ Սահմանադրութեան կը կազմէ ընտրելեաց ցանկ, մինչև ազգային ժողովը ընտրելեաց վերայ քուէարկելով ձայնից բազմութիւն ստացողին պատրիարք կը հրատարակէ ու ի հաստատութիւն օգոստ. Սուլթանին կառաջարկէ։

Հանգուցեալ ի Տէր Յովհաննէս պատրիարքիս յետոյ նոր պատրիարքի ընտրութիւնը երկարաձգուեց ինչ ինչ թիւրիմացութեան պատճառով։ Կոստանդնուպօլսեցիք ամենայն յամառութեամբ պնդումէին թէ պատրիարք կարող են ընտրել այն բոլոր եպիսկոպոսները, որոնց ազգը կը կամենայ, իսկ Երուսաղէմայ Սուրբ Յակոբեանց միաբանութիւնը ի նկատի ունենալով իւր դարաւոր սովորութիւնը, որ օրէնքի զօրութիւն էր ստացած՝ պնդումէր թէ պատրիարքական ընտրելի կարող են լինել միայն նոյն միաբանութեան պատկանողները, առարկելով թէ միաբան չեղողը անգիտակ լինելով Երուսաղէմայ յատկացեալ գործառածոյ՝ յանգէտս կարող է սխալուել և կորցնել ինչ ինչ իրաւունքներ։ Մինչև որ «Ջրուհանէսեան» ի ծանուցեալ խնդիրը վախճանական ելք կունենար ըստ ցանկութեան Երուսաղէմայ ս. Յակոբեանց միաբանու-

թեան, արդէն եռամեայ անիշխանութեան պատճառով Հանգուցեալ Յովհաննէս պատրիարքի տնտեսած դրամները սպառուած լինելով ձեռք զարկուած էր փոխառութեան՝ երբ Նայի վարդապետ պատրիարք ընտրուեց։

Նայի պատրիարք մեծագործութեան եռանդով ոգեւորուած սկսաւ ընդարձակել վանքի տպարանը և այլ սոյնպիսի հաստատութիւնները յոյս ունենալով ազգի առատաձեռն նուիրատուութեան վերայ, բայց դժբաղդաբար այդ յոյսը ի դերև է ելնում և մինչ կողմից Եգիպտոսի կալուածները կորստեան վտանգի են ենթարկվում, իսկ այդ վտանգը հեռացնելու համար ծախքերն և բորկվումն վանքի դրամական անհատանձելի վիճակի վերայ։ Դրամական այդ անձուկ դրութիւնը բարւոքելու համար Երուսաղէմայ վանուց միաբան Վեր. Երեմիա եպիսկոպոսը այցելութիւնը Ռուսահայոց մէջ նուիրակութեան համար բաւական չեղաւ պատրաստ թեթեւացնելու, ուստի Հանգուցեալ Պատրիարքը երկու վարդապետ ևս ուղարկելով նուիրակ Ռուսահայոց մօտ, ինքն շտապեց գալ Կ. Պոլիս գործին ստիպողականութիւն տալու։ Կ. Պոլսում Ս. Երուսաղէմայ պատուոյ բարձման համար մանաւանդ կարգուեց, այդ մանաւանդը քանիցս դիմեց ազգին սուրբ Երուսաղէմայ վերայ գթութիւն շարժելու համար հանգանակութեան հրաւէր կարդալով։ Այս միջոցին ևս գոհացուցիչ չը գանելով Մանաւանդը մինչև անգամ իւր պիւանոական ծախքերը հոգալու, դիմում է Ազգային Վարչութեան, որ Ազգային ժողովոյ հաճութիւնը առնելուց յետոյ, Օսմանեան կառավարութեան թոյլատուութեամբ արուում է հայերից վինուորական որոշ հետ ժողովել մարդագլուխ երեք դուռուշ Երուսաղէմայ պատուոյ բարձման համար։ Իրանց այս վիճակին մէջ ահա վախճանում Ս. Նայի պատրիարք։ Ըստ վանական կանոնադրութեան Ռուսաստանեայց յայանի Վեր. Երեմիա եպիսկոպոս միաբանութեան քուէարկութեամբ ընտրուեց Պատրիարքական Տեղապահ որ ղեկավարում է ընթացիկ գործերը և նախագահում վանական ժողովներին։

Ինչպէս հաւաստի աղբիւրներից լսում ենք ըստ Սահմանադրութեան, Երուսաղէմի միաբանական ժողովը եօթնանուն յանկը պատրաստելուց յետոյ, երից ընդրելեաց ցանկն ևս կազմել է ըստ այսմ։

Նոր պատրիարքի ընտրութեան համար յուսով ենք նախկին դէպքերը չեն կրկնուիլ. միայն մի ինդիր, որ կարի ուշադրութեան արժանի է, է այն՝ որ ոչ միայն Երուսաղէմայ միաբան չեզոքները չեն կարող ընտրելի լինել, չեն կարող ընտրելի լինել և նոքա, որոնք կամովին հրաժարուել են կամ հրաժարեցրած են Երուսաղէմայ միաբանութիւնից. այս կարևոր կէտ է, որովհետև եթէ Կ. Պօլսոյ Ազգային ժողովը իրաւունք էլ ունենայ եռանուն ցանկից դուրս անձանց և քուէարկել, բայց եթէ ընտրելիայ կարգից դուրս ձգուեն նաև այն եպիսկոպոսները որոնք հրաժարուած կամ հրաժարեցրած են Երուսաղէմայ միաբանութիւնից, այն ժամանակ Երուսաղէմայ պատրիարքական ընտրութիւնը շատ անձուկ շրջանի մէջ պիտի կատարուի. օրինական ընտրելի թէև հազիւ երեք եպիսկոպոսներ մնան, բայց և կարող են արժանաւոր վարդապետներն և ընտրելի լինել ինչպէս եղաւ Հանգուցեալ Եսայի պատրիարքը։

Մեզ կողմից շատ արդարացի է այն տեսորութիւնը որ հրաժարուածը կամ հրաժարեցրածը չի կարող ընտրելի լինել, որովհետև մի մարդ, որ չէ կամեցել կամ տկարութիւն չէ ունեցել տանելու վանական միաբանութեան չարքաշութեանը, իրաւունք պիտի չունենայ միաբանութեան գլուխ լինելու ընտրելիութեան։ Ալօթինք տա Աստուած, որ արժանի յաջորդ յարուցանէ Երուսաղէմայ աթոռը Յակոբեանց Աթոռին։

Դնումենք այստեղ Երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ Սահմանադրութեան և Երուսաղէմայ առանձին կանոնադրութեան յօդուածները, և արտատպումենք Հանգուցեալ Եսայի պատրիարքի մասին կենսագրական համառօտ յօդուածը։

—

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԻՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ.

Ա.պէտ. Սահմանադրու–թիւն յօդ. 22. — Ս. Երուսաղէմի պատրիարք ընտրուելու անձը գոնէ երեսուն և հինգ տարին լրացուցած. և ի ծնէ Օսմանեան Տէրութեան հպատակ. Միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլար. մինչդամայն միաբանութենէն զատուած մէկը պէտք չէ ըլլայ։

Միաբանութենեն զատուած չեն համարուիր այն անձինքը՝ որ

Պատրիարքարանի ծողովոց կազմէն ազգային պաշտօնի մէջ գործածուած են Երուսաղէմի Պատրիարքին հաւանութեամբ։

Կանոն Մխ. Ո–ին Ս. Եր–ի 1օդ. 29. — Ս. Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Պատրիարքը Ազգային Երեսփոխանական ժողովով կընտրուի Միաբանութեան ներկայած ընդբնէջ մէջէն, որոյ ցուցակը կըղպտրաստուի հեռեւեալ կերպով։

Նախ՝ Միաբանական ընդհանուր ժողով կըգումարի՝ Միաբանութեան ամբողջ եկեղեցական անդամոց կէսէն գէթ մէկ աւելի թուով, և ընդ նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահի, որ կը յիշեցունէ ժողովականաց պատրիարքական ընտրելիութեան արժանաւորութեան հանգամանքը և կըհրաւիրէ զնոսա խղճի մտօք կատարել իրենց ընտրութիւնը։

Իւրաքանչիւր ընտրողը թղթի մը վրայ կըգրէ այն ամեն Մխբան եպիսկոպոսաց և վարդապետաց անուանները, որք երեսուն և հինգ տարին լրացուցած, և Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլալով, ըստ իւր խղճի՝ կրօնական, բարոյական և ուսումնական բարեմասնութեամբք արժանի են Պատրիարքական գահը բարձրանալու։

Քուէհամար կըկոտաորուի սոյն քուէից, և առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով ատ–ալ են ցո–ցակ մը կըպատրաստուի եօթնեակն ընտրելեաց։

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կըհրաւիրեն սոյն եօթնեակին ընտրելեաց ցուցակին մէջէն միայն երեք անձի վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ, և քուէհամար կատարուելով նըկըտը ցո–ցակ մը կը պատրաստուի երեքն ընտրելեաց իւրաքանչիւրին ընդունած քուէից առաւելութեան կարգաւ, իսկ եթէ երկու ընտրութեանց ժամանակ հաւասար քուէներ պատահին վիճակաւ կորոշուի ընտրելին և սոյն երեքին ընտրելեաց ցուցակին իբր ապահաւոյգոն ընտրելեաց ցո–ցակ՝ հանգերձ առաջին եօթնեակին ընտրելեաց ցուցակաւ, և իւրաքանչիւր ընտրելոյ բարեմասնութիւնքն և արդիւնքն նկարագրող Տեղեկագրով կը ներկայուի Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ, որ անոնց մէջէն կընտրէ զՊատրիարքն Ս. Երուսաղէմի, կ. Պօլսոյ պատրիարքի ընտրութեան արամադրութեանց համեմատ։

ԱՄԵՆ. Տ. ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱղԷՄԻ

—

«Մեծաւ ախորժեամբ կը ծանուցանեմք թէ, Երուսաղէմայ Ս. Յակոբեան վանուց Մխաբանութեան կողմէ երէկ իրիկուն յազգային Պատրիարքարան հասած հեռագիր մը յաւօք կը գտնէ թէ Երուսաղէմայ Պատրիարք Եսայի Արքազան, հինգշաբթի առաւօտ, 29 Օգոստ. հանգեաւ ի Տէր, ի խոր սուգ համակելով Միաբանութիւնն և համայն ազգը։

«Հոգելոյս Հայրապետին այս տարաժամ վախճանին՝ որ ի վայրկ նախատեսելի էր՝ իւր ծանուցեալ անբուժելի հիւանդութեան պատճառաւ, դառն վիշտ կը պատճառէ համայն Հայ ժողովրդեան, և կուգայ դառնութեամբ լնուլ անոր արդէն վշտահար սիրտը։

«Հոգելոյս Արքազանն 1818-ին ծնած էր Կեսարիոյ Թալաս գիւղին մէջ, և 1818 ին Երուսաղէմ յուխտ երթալով, միաբանութեան անդամ գրուած և իւր նախորդ Հոգելոյս Յովհաննէս Պատրիարքին աշակերտելով, սարկաւագ և վարդապետ ձեռնադրուած է։ Այս միջոցին Երուսաղէմայ Թանգարանն, որ հազարաւոր հատորներէ զատ, 2700 Թանկագին գրչագրերով ճոխացեալ է, կազմակերպած է յատուկ տումարի մէջ արձանագրելով զանոնք։ Նոյնպէս վանուց տպարանին տեսուչ կարգուելով, ճոխացուցած և բարեկարգած է զայն։ Երբ 1862-ին Յովհաննէս Պատրիարքը վախճանուեցաւ, Եսայի վարդապետ Ուզունեան, որ ի տալայ տեսց արհեստագործութեան մեծ յարմարութիւն ունէր, Եւրոպա ուղևորուեցաւ լուսանկարչութեան և կալուանաձուլման որուեստները կատարելագործելու համար։ Եւրոպայէն վերադարձին, Պատրիարքական ընտրութեան առիթիւ, «ներսէն դրսէն»-ի ծանուցեալ խնդիր ծագեցաւ, և հուսկ ուրեմն Միաբանական ցանկն ուղուելով, 1864-ին Երիսփ. ժողովոյ կողմէ Երուսաղէմայ Պատրիարք ընտրուեցաւ Եսայի վարդապետ, որ Պօլիս գալով, էջմիածին գնաց եպիսկոպոս ձեռնադրուելու Հոգելոյս Մատթէոս Կաթողիկոսէն. էջմիածնէն վերադարձին, Սահմանադրութեան վերայ ուխտեց և Երուսաղէմ վերադարձաւ յատուկ կանոնադրութեամբ մը՝ զոր Երեսփ. ժողովը պատրաստած էր։ 1866-ին Եգիպտոս գնաց Երուսաղէմայ բռնաբարեալ կալուածոց խնդիրը կարգադրելու համար։ Ս. Տեղեաց իրաւանց խընդիրը մեծ արիու-

ուխտեամբ պաշտպանեց մերի Լատինաց և մերի Ցունաց դէմ, և յաջողեցաւ Լատինաց արգելուլ մեր ազգային սեփականութիւնն եղող Գլխադրի խորանին վերայ պատարագել։

« Հոգելոյս Սրբազանն Երուսաղէմայ պարտուց բարձման համար 1882-ին մայրաքաղաքս եկաւ, և 2—3 տարի ի զուր թափառելէ յետոյ, հիւանդացաւ և այս վիճակին մէջ էր որ Երուսաղէմ վերադարձաւ, երբ Ամեն. Ցարութիւն Սրբազան Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ։

« Եսայի Սրբազան 21 տարի Պատրիարքական պաշտօն վարելէ և վանուց մէջ ազգի ազգի բարեաքտումներ մուծանելէ յետոյ, վախճանեցաւ առանց մի մեծագոյն վիճականաց արժանանալու, այն է՝ Ս. Յակոբայ վանուց մեծաքանակ պարտուց բարձումը տեսնելու, որուն համար այնքան տքնեցաւ։ »

(Լոյս)

Ըստ սովորութեան՝ անցեալ Սեպտեմբեր ամսին Ս. Գէորգայ տօնի օրը կատարուեց Մայր Աթոռոյս Ձեմարանի բացման 11-րդ տարեդարձը։

Ս. պատարագիչ յետոյ Մայր Աթոռոյս միաբանութիւնը ըստ իւրաքանչիւր աստիճանի եկեղեցական սպասուք թափօրով ուղղուեց դէպ ի Ձեմարան՝ Աթոռոյս արտաքին՝ դէպ ի գլուխը տանող դարպասից։ Ձեմարանի աշակերտք զոյգ զոյգ յառաջընթաց էին թափօրին, նոցա հետևումէին երգեցիկների խումբը՝ « Քաջամարտիկ » շարականը երգելով։ Թափօրը կանգ առաւ Ձեմարանի հիւսիսային դրան առաջ, ուր Հանգուցեալ ի Տէր Գէորգ Գ. Կաթուղիկոսին հոգեհանգիստ կատարելուց յետոյ, սկսուեց դպրոցական հանդէսը, իսկ հոգևորական դասը և Վաղարշապատու առաջնուորը հիսաբոլորակ շրջանով նստեցին իրանց յատկացեալ աթոռների վերայ՝ յաջմէ և յահեկէ Ամենապատիւ Տեղակալ Մկրտիչ Սրբազան Հօր։ Դպրոցական հանդէսը բացուեց Նորին Ամենապատիւ Սրբազնութեան հրամանաւ Արժ. Ցուսիկ վարդապետի բերանացի ատենաբանութեամբ, որից յետոյ մէջ ընդ մէջ երգեցողութեամբ ի կոլմանէ աշակերտաց երկու ուսանողներ ճառեր կարդացին։ Ապա Ձեմարանի Տեսուչ Մեծ. Պ. Նիկողայոս Խոսրովեան կարդաց Ձեմարանի $188^4/_5$ ուսումնական շրջանի

տեղեկագիրը, որ ամբողջապէս կրկնենք ամենագրոյս հետևեալ ամենատեսակում ի գիտութիւն ընթերցողաց։

Վ. ԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶՆԱԴՈՑՆ ՀԱՑՐԱՊԵՏԸ ՏՓԽԻՍԻՄՆ.

(Տէրեւէ լրագրներէց).

Ամսոյս 11-ին, ուրբաթ օրը, Թիֆլիսի Հայոց եկեղեցիների անընդհատ զանգահարութիւնը լսոյ տուեց քաղաքի ազգաբնակութեանը նորահաստատ Վեհափառ կաթուղիկոսի մօտալուտ գալուստը։ Առաւօտեան 10 ժամից արդէն, այն փողոցները, ուր տեղից պէտք է անցնէր Հայրապետը, զարդարուած էին գորգերով։ Հանդիսասեռների բազմութիւնը, որոնց մէջ բազմաթիւ օտարականներ էին նկատվում, ժողովուած էր այդ փողոցների երկու կողմը. և տների լուսամուտներում։ Տասն և մէկ ժամին երկաթուղու առանձին գնացքը բերեց Նորին Վեհափառութեանը Թիֆլիսի կայարանը, ուր Նորան դիմաւորեցին՝ Թեմիս Սրբազան Առաջնորդը, քաղաքագլուխը և մօտ 16 իրաւասու, Թիֆլիսի փոխ-նահանգապետը, ոստիկանապետը և այլ պատուաւոր անձինք։ Երկաթուղու կայարանից Նորին Վեհափառութիւնը քառաձի կառքով մնաւ քաղաք։ Հայրապետական կառքի առաջից գնում էր մի խումբ ժանդարմների, իսկ յետևից ընթանում էին կառավարչապետի թիկնապահ ձիաւորները։ Ուր գետի աջ կողմը, Միքայէլեան կամուրջի ծայրին, Նորին Վեհափառութեան դիմաւորեց հոգևորականաց դասը զգեստաւորուած, հոգևոր երգասացութեամբ և առանձին իմն ծիսակատարութեամբ։ Այնուհետև հոգևոր թափօրը համրաքայլ յառաջ ընթացաւ դէպի Վանաց Մայր-եկեղեցին։ Կամուրջից մինչև եկեղեցին, փողոցի աջ և ձախ կողմը, կանգնեցրած էին քաղաքի արհեստաւորաց դասակարգերը (համքարները) իրանց դրօշակներով։ Ամփոփանքին, որի տակ ընթանում էր Նորին Վեհափառութիւնը, բռնած ունէին չորս հայազգի աստիճանաւոր, Նորին Վեհափառութեան թևակցում էին՝ Ղարաբաղու Առաջնորդ Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանը, Սիւնեաց անդամ Յովակիմ եպիսկոպոսը, Ղարսայ Առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը և Հախպատու վանահայր Վարդան արքեպիսկոպոսը։ Կարգապահութիւնը կատարեալ էր։

եկեղեցու մէջ, հոգևոր երգասացութիւններից յետոյ, Թեմիս Սրբազան Առաջնորդը ոչ ջանեց Նորին Վեհափառութեան հետևեալ բանախօսութեամբ.

Սրբազնակատար Հայրապետ.

Ի պահուս՝ յորում լցաւ եկեղեցիս սուրբ սերճաշուք վսեմօք շնորհաձիր գալստեան Ձերոյ և համօրէն դասու եկեղեցականաց և աշխարհականաց, աստէն ի մի խմբեալոցս Թնդացին սիրտք բերկրաթափատար, մատչիմ պատկառ երկիւղածութեամբ իդէպ իսկ յիշել զբան հոգեշունչ սաղմոսողին. «Երանի՛ ազգի, որոյ Տէր Աստուած օգնական է նմա. ժողովուրդ, զոր ընտրեաց ի ժառանգութիւն իւր»:

Բա՛ըէ, որպիսո՛յ Աստուածային օգնականութեան և յատկական մեծի գթութեան են շնորհք առ հայկազնս ժողովուրդ զի ցրուեալ վտարեալ վայելչազուրկ ի սփիւռս երկրի յերեսաց աշխարհատասան խռովութեանց և մրրկածուփ արհաւրաց կենցաղոյս՝ դարձեալ ի դարս ժամանակաց անկապտելի պահեաց զպանծալին իւր Գահ առաքելական, զոր հաստատեցին ամոլքն հաւատոյ մերոյ սուրբքն Թադէոս և Բարդուղիմէոս, և որ յետ նոցա բազմաչարչար մեծ վկայն Քրիստոսի, սուրբն Գրիգոր Լուսաւորիչ. Գահ նուիրական՝ յորմէ ընթացեալ եռաւուղ գետոց փրկութեան — հաւատոյ, յուսոյ և սիրոյ — արբուցանեն զծարաւս հոգւոց համօրէն զաւակաց նորին:

Ցայս գահ երկնաձիր, Վեհափառ Տէր, կամք՝ գթութեան նոյն Վերնախնամ Տեսչութեան զՁեզ հաճեցաւ կոչել ի բազմել, ի տածել տաւազել զհօտ սրբոյն Գրիգորի ի վայրի դալարաւոջ և առ ջուրս հանգստեան աստուածային փրկարար սլատգամաց. վասն որոյ և հարան լուսոյ, Հայաստանեայց եկեղեցի, որ յերկին և յեռանդն զքաւրձ զգեցեալ սգոյ և տխրութեան, ողբայր զայրիութեան իւրոյ զվիճակ դառնագին, արդ ցնծայ և զուարճանայ յոսկեհունս զարդարեալ և պաճուճեալ յընդունել յառագաստան սրբութեան զփեսայդ գերաստիճան, որ «յարուցեալ հիւսսի գաս հարաւ, շնչել ի պարտէզ նորա զի բուրեսցեն խունկք նորա. խունկք բազմերանգի և բազմապիսիք, հոգեբուղխ շնչմամբ ընդ սուրբս երջանկացեալ նախորդաց Ձերոց ի հաստատուն արմատս ուռճացեալք՝ յանքոյթս ի խորշակաց և սառնամանեաց:

Այո՛, աներկբայ են հաւատք մեր, Վեհափառ Հայրապետ, թէ

գայք նախանձախնդիր վախճամամբ պայծառութեան և փառաց Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցւոյ ի տալ ղշունչ Ձեր ի պարտէզ մեր՝ զի խունկք բուրեսցին. և յայգիս մեր՝ զի գալարեսցին, և յարդիւնս քրանաչան վաստակոց Ձերոց ապրեն զծաղիկս ի հիւսել Ձեզ զպսակ պարծանաց. առ որ յաւէտ ըղձակարի որգիքս Ձեր համբուրեն՝ մաղթեալք ի Տեառնէ զի զգործս ձեռաց Ձերոց ուղիղ արասցէ և Ձեզ և յաջողեսցէ Ձեզ, ի վայելչութիւն և շինութիւն եկեղեցւոյ սրբոյ և ի փառս անուան Ձերոյ։

Մաղթեմք զի օրհնեսցէ և զՕգոստափառ Ինքնակալն մեր և զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց զԱղէքսանդր Աղէքսանդրովիչն, որ ի դպրոց ամենազօրմ խնամոց իւրոց առ Մայրս մեր Ս. Էջմիածին հաստատեաց զվեհափառութիւն Ձեր յԱթոռ առաքելական սրբոյն Գրիգորի, որոյ ազօթիւք և բարեխօսութեամբ անսասան պահեսցէ Տէր զեկեղեցի Հայաստանեայցս յաւիտեանս յաւիտենից և զարև կենաց հայրախնամ Հովուապետիւք մերով երկարեսցէ ընդ ամս յամայր, ի ցնծութիւն սրտից մերոց։ Եւ ի օրհնեալ և անուն Տեառն որ յարոյց ընտրելոյ ժողովրդեան իւրոյ զմարգարէդ Մովսիսապատիս, որ գայք ուղղել զաստս մեր ի ճանապարհս վերկումեան ըստ տանուաբանեայ պատուիրանաց նորա։ Օրհնեալ ե մնաս Ձեր ի մեզ վեհափառ Տէր. օրհնեալ և որ գասդ յանուն Տեառն»։

Այս բանախօսութեանը Նորին վեհափառութիւնը պատասխանելով, օրհնեց Կայսերական կառավարութիւնը և տեղական վարչութիւնը և իրան մատուցած ծառայութիւնքը վերագրեց ոչ թէ իւր անձին, այլ այն ազգին, որին հովիւ լինելու կոչուած է ինքը։ Նորին վեհափառութիւնը հակիրճ բառերով յայտնեց՝ թէ ինքը այս հասակին, ծերութեան և անձնական տկարութեան պատճառով յանձն չէր առնիլ այդ ծանր պաշտօնը և այդ փշալից ասպարէզը չէր մտնիլ, որպէս և հրաժարուեցաւ 1884-ին։ Բայց երևի Նախախնամութեանն այնպէս հաճելի էր, որ այդ ծանր պաշտօնը մի օր իրան վիճակուէր, ուստի և Աստուծոյ անհատնելի կամքով հնազանդուելով և Ռուսաց վեհափառ Կայսեր վճռին խոնարհելով ինքը չէր կարող իրացս մերժել իրանից այդ դժուարին պաշտօնը։ Ուստի ինքը յանձն առնելով այդ պաշտօնը ներկայ դժուարին հանգամանքներուն մէջ, խնդրում է ժողովրդին աղօթել առ Աստուած, որ իրան կորոշութիւն տայ, որպէս զի վը-

շէյ խաղաղ և տատանակից թուղ ու վարդ քաղէ և ժողովրդին ուտացնէ։

Նորին Վեհափառութիւնը, իւր խօսքի վերջուն, կատարեալ յոյս յայտնեց, որ մեր ողորմած Կայսրը կը յարգէ իւր հաւատարիմ Հայ ազգի խնդիրը և մեզ զբաղեցնող հարցերը մեր ցանկութեան համեմատ լուծումն կստանան։

—o—

Անոյշ 12-ին, շաբաթ օրը, ժամը մէկին նշանակուած էր Կովկասի Կառավարչապետ Իշխան Դոնդուկով—Կօրսակովի մօտ Վեհափառ Կաթողիկոսի ընդունելութեան հանդէսը։ Նշանակեալ ժամիդ առաջ Պայծառափայլ Իշխանի պալատում հաւաքուեցան Թիֆլիսի մէջ գտնուած թէ զինուորական և թէ քաղաքական բարձրաստիճան պաշտօնեայք, իրաւաւսուներ և քաղաքիս պատուաւոր անձինք։

Նշանակուած ժամիդ շատ առաջ խուռն բազմութիւն ժողովրդեան և համքարները իւրեանց դրօշակներով հաւաքուել էին թէ պալատի առաջ և թէ այն փողոցներում, որոնցով պէտք է անցնէր հանդիսաւոր գնացքը։

Ուղիղ ժամը 1-ին Վեհ. Հայրապետի քառաձի կառքը պալատը հասաւ։ (Կառքին հետևում էր Կառավարչապետի թիկնապահ հեծելազօրքը)։ Վեհափառին ուղեկցում էին Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոսը, Գեր. Յովակիմ Եպիսկոպոսը, Գեր. Արիստակէս Եպիսկոպոսը, Արժ. Կարապետ Վարդապետը և քարտուղար պ. Ս. Բարխուդարեանը։

Հէնց որ կառքը կանգնեցաւ դրան առաջ, Նորին Պայծառափայլութիւն Իշխան Կառավարչապետը դուրս եկաւ իւր սենեակներից և ուղևորուեցաւ դէպի սանդուղքները։ Այստեղ սրահի մէջ Իշխանը համբուրելով Վեհափառի աջը, շնորհաւորեց Նորա գալուստը և հրաւիրեց դահլիճը։ Դահլիճում երկու կարգ կանգնած էին հրաւիրեալները։ Վեհափառը իւր ուղեկից հոգևորական-կանոներով կանգնեցաւ դահլիճի մէջտեղը։ իսկ Իշխան Կառավարչապետը առաջ գնալով Թոյլտուութիւն խնդրեց Հայրապետից կարդալ Կայսերական Հրովարտակները Նորա Հաստատութեան և պարգևների մասին։ Հրովարտակները կարդաց Իշխանի դիւանի

վերաստեսուչ գեներալ Եէպէլեօվը, կարդալուց յետոյ թէ՛ Հրովարտակները և թէ՛ Շքանշաններդը յանձնեցին Վեհափառին։

Ա.յնուհետև Իշխանը դարձաւ Հայրապետին հետևեալ ճառով։

ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի դիմաց Իմ և բոլոր ներկայ հանդիսականաց շնորհաւորում եմ Ձեր Վեհափառութեան ներկայ վսեմ կոչումն Պատրիարք Կաթողիկոսութեան ամենայն Հայոց և այն կայսերական պարգևներն, որ պատիւ ունեցայ այժմ իսկ յանձնել Վեհափառութեանդ։

Ձերդ Վեհափառութիւն, ինչպէս Ես ինքս, այնպէս և ամենեքեան վստահ ենք, որ Ձեր Վեհափառութեան Կաթողիկոսական պաշտօնավարութիւնը պիտի լինի շատ փառաւոր և օգտակար, Ձեր խնամատուն կառավարութեան ներքոյ մխիթարուած պիտի լինի Հայ ազգն և Նորա որդիքը բարոյական զեղեցիկ յատկութեամբ պիտի զարգանան և հաստատ մնան իւրեանց հաւատարիմ հպատակութեան մէջ առ Գահն Ռուսիոյ, որով պիտի փառաւորուի Վեհ Անուն Օգոստափառ Ամենասիրելի Կայսերն Մերոյ յօգուտ Հայ եկեղեցւոյ, յօգուտ Պետութեան և սիրելի Հայրենեաց մերոց։

Ձերդ Վեհափառութիւն։ Այդ ամեն յոյսերի իրագործման հաստատուն գրաւական տեսնում ենք Մենք Ամենքս յատկապէս Ձեր Վեհափառութեան պատկառելի և յարգելի անձնաւորութեան մէջ, որոյ հաւատարիմ երկարամեայ պաշտօնավարութիւնքը, մանրակրկնցաղ ընթացքը գիտացին ամենայն արդարութեամբ գնահատել, ինչպէս Ազգն Հայոց, այնպէս և Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրն ամենայն Ռուսաց։

Սորան պատասխանեց Վեհափառը հետևեալ խօսքերով։

ՁԵՐԴ ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ.

Կը մատուցանեմ Ձեզ և բոլոր այս հանդիսական ղօրապետաց և ազնուականաց Իմ խորին շնորհակալութիւնը Ձեր սրտագին շնորհաւորութեանց համար։ Ես իմ անձը երախտապարտ կը համարիմ յաւիտեան Նորին Կայսերական Մեծութեան Օգոստափառ Կայսերն Մերոյ, որ այսպէս առատօրէն հաճեցաւ ծաւալել իւր ողորմութեան և գթութեան շնորհն առ անձնաւորութիւն իմ և առ ազգն Իմ սիրեցեալ, հետևելով Իւր նախորդ ծնողաց ընթացքին, որոյ համար յատկապէս կը խնդրեմ Ձեր Պայծառա-

վայելութիւնից արկանել յոյս Նորին Մեծութեան իմ սրտի անսահման գոհունակութիւնը և ամենահըպատակօրէն երախտագիտական ըղգացմունքը։ Հայ ազգը միշտ հաւատարիմ եղած է և շնարհապարտ առ Մեծահզօր Պետութիւնն և այսուհետև էս նոյն հաւատարմութեան մէջ անդրդուելի պիտի մնայ։ Ես վստահ եմ թէ Մեր Ազգը երջանիկ պիտի լինի ընդ հովանաւորութեամբ Պետութեան Ռուսաց և Նորին Կայսերական Մեծութեան Սիրալը գթած և ողորմած Նորա վերայ։ իսկ ինչ որ կը վերաբերի անձնականապէս Ինձ, կը վստահիմ ասել թէ՝ սուղոր գոլով յարգել ամենայն օրինական գործ, արդարութիւն և հրմարտութիւն այսուհետև էս պիտի աշխատիմ որքան կարող եմ արդարացնել Ձեր ամենքի և Ազգիս յոյսը և ակնկալութիւնը և Տէր Աստուած պիտի զօրավիգն լինի ինձ կառավարել Իմ եկեղեցին և ազգը այնպէս, ինչպէս ցանկալի է Աղոստափառ Կայսերն Մերոյ և վայել Նորա շքեղ Գահոյն և Մեծ Անուան։

Սորանից յետոյ Իշխանը Թոյլատուութիւն խնդրեց Նորին Վեհափառութենից ներկայացնել Նորան բարձրաստիճան հիւրերին և Իւր ամուսինը։ Բոլոր հիւրերը մէկ մէկ մօտեցան Վեհափառին աջը առնելու։ Յետոյ Հայրապետը ներկայացրեց Նորին Գայծառափայլութեան Իւր հետ եկող անձանց։ Ապա Իշխանը առաջնորդեց Հայրապետին Իշխանուհւոյ ընդունարանը։ Այստեղ մօտ քառորդ ժամ մնալով Վեհափառը հրաժեշտ առաւ։ Ապա Ն. Վեհափառութիւնը այցելութեան գնաց մի քանի բարձրաստիճան պաշտօնական անձանց և վերադառնալով Վեհարանը ընդունեց տոյա և դանազան բարձրաստիճան անձանց այցելութիւնները։

Հետևեալ օրը, կիւրակի, առաւօտեան պատարագին եկեղեցում ներկայ լինելուց յետոյ ժամը 1-ից քառորդ պակաս ընդունեց Իշխան Դոնդուկովի փոխ-այցելութիւնը։

Տեղւոյս «Новое Обозрѣніе» լրագրում կարդում ենք հետևեալ յօդուածը։

Ա.յսօր (11 հոկտ.) կատարվեցաւ ամենայն Հայոց Պայրագոյն Պատրիարք — Կաթողիկոսի Մակարի մուտքը Թիֆլիս, որ վաղուց ծանօթ է Թիֆլիսի հօտին իւր բազմամեայ ծառայութեամբ, իբրև Վրաստանի և Իմերէթի Հայոց Թեմակալ առաջնորդ։

Հայերի քրիստոնէութիւն ընդունելից յետ չընթացաւ աւելի քան 15 դարերի Էջմիածնի Հայրապետական գահը կենդրոն էր հայ ազգի հոգևոր կեանքի։

Դրիգոր Լուսաւորչի ժամանակից Էջմիածնի գահը պատնէշ է եղել հայ ազգի հոգևոր անկախութեան, ազգի, որ գիտացել է պահպանել արևելեան հաւատոյ սրբութիւնն անհաւատար պատերազմում Բրիստոսի վարդապետութեան մոլեռանդ հալածողների դէմ և Հռոմի ու Բիւզանդիանի պահանջների դէմ։

Քաղաքական աղէտից ժամանակ, որոնց զոհ գնաց Հայաստանն, որ գտնվում էր Ասիայի զանազան աշխարհակալների մեծ ճանապարհի վերայ, Էջմիածնի կաթողիկոսը շարունակում էր վարել իր հոգևոր գլխաւորութիւնը իր հօտի վերայ։ Եղել են ժամանակներ, երբ Ս. Լուսաւորչի յաջորդները, և շնորհս անյաջող հանգամանաց, որ ծանրացել են Էջմիածնի վերայ, որոնել են աւելի ապահով տեղեր։ Ակսպիսի դէպքում Էջմիածինը պահպանել է իր Մայր եկեղեցու նշանակութիւնը, բայց Հայրապետական աթոռը տեղափոխվել է այնտեղ, ուր կաթողիկոսի հովուապետական իրաւանց աւելի մեծ ազատութիւն էր տրվում։ Ակսպէս երբ Կիլիկիայում Հայոց թագաւորութիւն կանգնեցաւ, Հայրապետական գահը տեղափոխվեցաւ այդ պետութեան մայր քաղաքը՝ Սիս։ Բայց այս թագաւորութեան անկումից յետ XIV դարում, երբ և Հայրապետական գահը խզճալի վիճակի մէջ ընկաւ և մինչև անգամ ենթարկվեցաւ արևելեան եկեղեցիներին թըշնամի հռոմէական ազդեցութեան, Հայերը չը նայելով իրանց անօգնական վիճակին, 1441 թ. արին Ս. Էջմիածնում ժողով, որ կրկին վերադարձրեց Էջմիածնին իր նախկին նշանակութիւնը։ Ակս ժամանակից Էջմիածինը էլի դարձաւ ծայրագոյն պատրիարք Կաթողիկոսների նիստը որոց իրաւասութիւնը ճանաչում են Հայերը ամեն երկիրների, բացի Կիլիկիայից, ուր մինչև ցայժմ շարունակվում է Սսի կաթողիկոսների շարքը, որոնք արևմտեան ինդրիգային սիրելի գործիքն են, ինդրիգային, որ կամենում է Տաճկահայերին կորզել այն հոգևոր գահի ազդեցութիւնից, որ գտանվում է ամենայն Ռուսաց թագակիրների առանձին հովանաւորութեան ներքոյ։ Ներկայ դարիս սկզբից Ռուսաստանը գործօն մասնակցութիւն ցոյց տուեց Հայ եկեղեցւոյ և Էջմիածնայ Աթոռի վիճակի վերաբերութեամբ, որին հովանա-

ւորելը դեռ և՛ս Պետրոս Մեծի ժամանակից Ռուսաստանի քաղաքականութեան աւանդութիւնը դարձած է։

Երբ, 1801 թ. Յովսէփ արքեպիսկոպոսի մահից յետ Թիֆլիսում, Երևանի խանը, հակառակ Հայերի կամքին, Պարսից դրան դրգռմամբ աշխատում էր հայրապետական գահը տալ Դաւթին, Աղէքսանդր I Կայսրը հրամայեց Վրաստանի գլխաւոր կառավարիչ իշխան Ցիցիանովին դինու զօրութեամբ վերահաստատել օրինաւոր Կաթողիկոս Դանիէլին։

1829 թ. իրագործվեցաւ Հայերի վաղուց ունեցած ցանկութիւնը, այն է տեսնել իրանց սուրբ քաղաքը ազատված անհաւատների ձեռքից։

Հայոց եկեղեցին, այս նորա համար բաղդաւոր օրից սկսած, գտաւ Ռուսաց Կայսեր անձնաւորութեան մէջ իւր բարձրագոյն Հովանաւորին և պաշտպանին։ Այս ժամանակից Բ. Դուռն, որոյ երկիրներում ապրում է Էջմիածնի Կաթուղիկոսի հօտի մեծամասնութիւնը, նախանձով սկսաւ վերաբերուիլ դէպի նորա աղղեցութիւնն, որ Ռուսաց քաղաքականութեան հաստատուն պահանջների առարկայ դարձաւ։

Զը նայելով կաթոլիկ և բողոքական քարոզիչների յաջողութեանց Տաճկահայերի մէջ, որ պաշտպանում է տրեմոեան քաղաքականութիւնն ամեն միջոցներով, հաւատարմութիւնը դէպի իւր ազգային եկեղեցւոյ վարդապետութիւնը կազմում է ցայսօր առանձնայատկութիւնը հայ ազգի, որ թշուառութեանց բովքում կռած է։

Այսօր մեր քաղաք հասած նորընտիր գլուխն հայ եկեղեցւոյ արժանացաւ ստանալու Թանգագին վկայութիւն Կայսերական բարեհաճութեան, որ հաստատումէ Ռուսաց Թագաւորի անխախտ հովանաւորութիւնը հայ եկեղեցւոյ վերայ, որ ազգակից է մեր եկեղեցուն իր ծագմամբ, ծէսերով և խորհուրդներով։

Ս. Կաթողիկոսին տրված Բարձրագոյն բեսկրիպտում Թագաւոր Կայսրը բարեհաճել է գծագրել յոյժ նշանաւոր խօսքերն, որոնք վկայում են Թէ «ոչ ոք ծառայել է Թագաւորի այնպէս հայ եկեղեցւոյ ընթացքում և նորա պահպանութեանը», իսկ Բարձրագոյն Հրովարտակում. որ Սրբազան Պատրիարքին հրաւիրում է ի գահն Էջմիածնի, Նորին Մեծութիւնը բարեհաճել է բաղդատել հայ ազգն իւր համակրութեան աւելի բարձր նշանակ։ «Աղօ-

թուամ ենք Ամենաբարձրեալ Աստծուն, ասած է Հրոմարտակում, թող նա օրհնէ Ծայրագոյն Պատրիարքին Աստուծոյ մեծ ծառայութեան համար ի բարօրութիւն և ի հզաւոր վերկութիւն Մեղ պէտք եղող հայ ազգին »։

Այս նոր վկայութիւնք կայսեր հոգացողութեան հայ եկեղեցւոյ բարօրութեան մասին ուրախ արձագանք կը տան Ծայրագոյն Պատրիարքի բազմաթիւ հօտում, որ դեռ և այս գտանվում է անհաւատների լծի տակ։

Նոքա յուսոյ քաղցր ճառագայթ կը դդեն այն ազգի սրտի մէջ, որ սոված է իւր բոլոր անկնկալութիւնք և յոյսերը դնելու Ռուսաց երկրի Մեծահզօր իշխողների վերայ։

ՏՓԽԻՍԻ ՀԱՑ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑԱՆԱԼԸ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱԿԱՐ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Ամսիս 12-ին, առաւօտեան ժամը 10-ին քաղաքիս բոլոր հայ հոգևորականները ժողովվեցան վանաց մայր եկեղեցին ներկայացնելու Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթողիկոսին։ Ջահանայք վիզն ծածկած դուրս գալով եկեղեցուց, գնացին կանգնեցին առաջնորդարանի դահլիճում։ Մի քանի րոպէից յետոյ դուրս եկաւ Նորին Վեհափառութիւնը և կանգնեց դահլիճի ծայրին, երկու կողմից եպիսկոպոսներով շրջապատուած։ Ապա տեղական առաջնորդ սրբազան Արիստակէս եպիսկոպոս դարձաւ դէպի Վեհափառը հետևեալ խօսքերով։ « Վեհափառ Տէր, երեք տարի է, յորմէհետէ ես վարում եմ թեմումս առաջնորդի պաշտօնը և անհամբերութեամբ սպասում էի Ազգիս Վեհափառ Հայրապետին։ Այսօր ահա հասաւ ժամը, և ես պատիւ ունիմ ներկայացնել Ձերդ Վեհափառութեան քաղաքիս հոգևորականաց դասը և խոնարհաբար խնդրել որ ցոյց տաք նոցա այն ճանապարհը, որով պէտք է գնան նոքա այսուհետև և օրհնէք նոցա »։

Այդ խօսքերից յետոյ Ն. Վեհափառութիւնը հետագայ խրատը խօսեց ներկայ եղող քահանաներին։

« Իմ ճանապարհորդութեան ժամանակ ես ինչ քաղաք մտել

եմ, ամեն տեղ հայ ժողովրդոյ խնդրել եմ որ իրենց ազօթքի մէջ խնդրեն Աստուածոյ որ կազդուրէ իմ հոգևոր և մարմնաւոր կարողութիւնքս իմ եկեղեցին ու ազգը կառավարելու համար, ես ցանկանում եմ եկեղեցին և հոգևորականութիւնը կառավարել ու դատել արդարութեամբ, խմաստութեամբ և առանց աչառութեան։ Բայց արդարութեամբ դատելը շատ անգամ սրով է եղել։ Դուք, ի հարկէ, գիտէք, ինչպէս Սողոմոն արքան սրով որոշեց իւր դատաստանին մնատուցուած մանկան հարազատ մայրը։

« Մեզ, հոգևորականներիս, սուր չէ արուած. և ես սրոյ փոխարէն պէտք գործ դնեմ ազ և լոյս։ Ազի մի յատկութիւնն է անհամ կերպակուր համովացնել, մեւսը այն է, որ երբ վէրքի վերայ դրուի՝ կը կսկծացնէ։ Այսն էլ նոյնպէս. թէ խաւարն է փարատում և թէ այրող է։ Մեր ներկայ հոգևորականից շատերը չեն ճանաչում ու յարգում իրենց կոչումն ու պաշտօնը. ես այդպիսիներին պէտք է պատժեմ ազով և լուսով. հոգևորականի անձին չեմ դիպչի ես. այլ կը պատժեմ նորա մէջ՝ նորա չարութիւնը, մոլութիւնը և զեղխութիւնը։

« Մինչև օրս արժանաւոր և անարժան քահանան չեն եղել որոշուելիս. ձեղնից շատերը առանց որև իցէ նշանաւոր գործ կատարելու իրենց ասպարիզում ստացել են պանազան պարգևներ՝ խոյչ, կամիլաւիայ, աւագ քահանայութիւն և այլն. ուրիշ առաւել անարժաններն էլ ամեն միջոց գործ են դրել նոյն պարգևներին արժանանալու համար. և այսպիսով արժանաւորութիւնն ու առաքինութիւնը մոռացութեան են տրուել։ Այսուհետև պէտք է առաջադիմեն շնորհքը, խմաստութիւնը և հանճարը։ Դոցա հետ էլ եկեղեցականի առաքինութիւնը և գովանի վարք ու բարքը պէտք է լինեն նորա արժանաւորութիւնքը։ Իմ օրովս պէտք է բարձրանայ հոգևորականութիւնը։ Մինչև այսօր աշխարհականներն են եղել քահանաների ճանապարհ ցոյց տուողները և նոցա իրենց հաճոյից համաձայն զեկավարողները. այսուհետև քահանայք պէտք է լինին նոցա ճանապարհ ցոյց տուողը։ Դուք պէտք է լինէք ժողովրդեան ուսուցիչ. ոչ միայն որդւոց, այլ և ծնողաց։ Ես ցաւելով պէտք է ասեմ, որ ձեղնից նոքա, որոնք գեմնազիոններում հայ մանկանց կրօնի և լեզուի ուսուցիչներ են, չեն կարողանում իրենց խնամքին յանձնուած մանկանց մէջ մեր եկեղեցու պահանջին յարմար ոգի ներշնչել ու զաստիարակել։ Գալով

այն քահանաներին, որոնք որ և իցէ գործում մինչև օրս յանցաւոր են ճանաչուած, ես այդպիսիների անցեալը չը պէտք է ի նկատի ունենամ և ներում եմ նոցա. բայն նոցանից, որոնք արդէն բանադրուած կամ արգելուած են հոգևոր իշխանութիւնից: Դուք պէտք է ջնջէք ձեր սրտից չարութիւնը և համեստութեամբ գործէք ու ձեզ յանձնուած ժողովուրդը հասուէք, ինչպէս վայել է մի ճշմարիտ հոգևորականի ի մխիթարութիւն իմ սրտի և յուբախութիւն Ազգի և եկեղեցւոյ»:

Ապա օրհնեց նոցա և արձակեց. և ամենքը հաւքուրելով Նորին Վեհափառութեան Աջը, հեռացան. քաղցր տպաւորութեան տակ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

ԸՆԴԱՐՁԱԿ

ՕՐԱՑՈՅՑ

1886

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՆ

ՍՈՒՐԲ ՓՐԿՉԻ ԱԶԳԱՑԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

Տպագրութիւն Գ. Պաղտասարեան
(ԱՐԱՄԵԱՆ)

ԳԻՆ 3 ՂՐՈՒՊ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օրացոյց և գուշակութիւնք օգոց.=Տարեգարձ Ծննդոց և Գահակալութեանց Վեհափառաց. — Յանկ Օամ. Սուլթանաց. — Աւագանի Կայսերական պալատան. — Նախարարք Բ. Դրան. — Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքին. — Հրամանատարք բանակաց. —

Կուսակալք Եւրօպական, Ասիական և Ափրիկեան Նահանգաց. — Առանձնաշնորհեալ Նահանգք. — Յատուկ կառավարեալ երկիրք. — Պատրիարքունք և Ազգապետք. — Օսմանեան դեսպանք. — Դեսպանք և Հիւպատոսք օտար Տէրութեանց ի Կ. Պոլիս. — Վիճակագրութիւն Թուրքիոյ. — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Օսմանեան պետութեան. — Հայրապետութիւն Հայոց. — Կեդրոնական Վարչութիւն Հայոց Թուրքիոյ. — Ազգային Ընդհ. ժողով. — Առաջնորդական վիճակք Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Վիճակք Երուսաղէմայ, Կիլիկիոյ, Ազթամարայ և այլն. — Մայրավանք. — Վանօրայք. — Վիճակագրութիւն Կ. Պոլսոյ թաղօրէից. — Բարեգործական և կրթական հաստատութիւնք. — Վիճակք և վանք ի Ռուսաստան, ի Պարսկաստան և ի Հնդկաստան. — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլ և այլ Տէրութեանց. — Հռոմէական հայ հասարակութիւն — Դատաստանք Պետական վարժարանաց. — Բժիշկ քաղաքական և Զինուորական. — Փաստաբանք Օսմանեան և օտար դատարանաց. — Արուեստագէտք. — Լրագիրք և պարբերական հրատարակութիւնք զանազան տեղեաց. — Պարտատոմար օրացոյց. — Վիճակագրական յուցակք համայն պետութեանց. — Ծանուցմունք:

Կեդրոնապետին է՝ Տպագրապան Գրագրանը, Յակոբեան խան, Կ. Պոլիս

Ծանօթ. — Այս տարուան տպագրութիւնը որ 300 երեսներու հասած է՝ նախորդ տարիներէ աւելի ընդարձակ և վերջին վիճակագրական տեղեկութիւններով ճոխացեալ է, առանց գնոյ աւելման,

---

Խոնարհաբար խնդրումենք Թեմական Ըստեանցներից և Հոգևոր Կառավարութիւններից իրանց ստորագասեալ Հաստատութեանց և նոցա մէջ գործող պաշտօնէից ցանկը ուղարկել Խմբագրութեանս ցԼն Յունվարի տարւոյս:

Շնորհակալութեամբ ստացանք Բերսիէ « Կեսար և Աստուած » (Բարոզ) գիրքը. Թարգմ. Ֆրանսերէնից Արգար Յովհաննիսեան Թիֆլիս. գինն է 20 կոպէկ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲՐՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊՈՏ